

ՄԱՐԶԻԿ

Մարզիկ

مجلة رياضية شهيرة
تصدرها جمعية الهومنتمن بيروت

marzig

SPORTS MAGAZINE

31րդ ՏԱՐԻ, 2012, ԹԻԻ 5 (359) - VOL. XXXI N°5 السنة الحادية والثلاثين - العدد الخامس



Հ.Մ.Ը.Մ. ԳԷՄՊՐԻՃ
35 ՏԱՐԵԿԱՆ

ԱՅՍ ԱՄԱՌ՝ ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ 6-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Այս ամառ, Հայաստանի մեջ տեղի կ'ունենայ համա-Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետական 6-րդ համագումարը, կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան: Համագումարը կը կատարուի Ծաղկաձորի «Կեչառիս» պանդոկին մէջ, 20-24 Օգոստոս 2012-ին, մասնակցութեամբ՝ Հ.Մ.Ը.Մ.ի կազմակերպական 19 շրջաններէ 30 ներկայացուցիչներու: Իրենց մասնակցութիւնը կը բերեն նաեւ Իրանի «Արարատ», «Նայիրի» եւ «Սիփան» միութիւններու ներկայացուցիչները:



գեկուցում, սկաուտական ընդհանուր կանոնագրութեան բարեփոխութեան առաջարկներ, ընդհանրական հարցեր (օտարամոլութեան հարց, ազգային դաստիարակութեան միջոցներ, մարդուժի պատրաստութիւն, հայկական ցեղասպանութեան 100-ամեակի ոգեկոչումներ եւ այլն): Առանձին նիստերով եւ աշխատանքային յատուկ յանձնախումբերով համագումարը կը քննէ գայլիկ-արծուիկ, արի-արեւոյշ կարգերու սկաուտական գիրքերը, երէցական կարգի գիտելիքները, ինչպէս նաեւ՝ Արարատեան կարգի եւ խմբապետներու վերաորակաւորման դասընթացին նիւթերը:

Համագումարի չորս օրերուն ընթացքին, մասնակիցները՝ Շրջանային ընդհանուր խմբապետներ, Շրջանային խմբապետներ եւ խմբապետուհիներ հանգամանօրէն կը քննեն Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութիւնը յուզող հրատապ հարցեր:

Համագումարը կը ծանօթանայ նաեւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ բանակումի նախաժրագիրին: Բանակումը տեղի պիտի ունենայ 2014-ի ամրան, Բիրականի մէջ:

Աշխատանքներու նախօրեակին, համագումարին կազմը կ'այցելէ Ծիծեռնակաբերդ եւ յարգանքի իր տուրքը կը մատուցէ Հայկական Ցեղասպանութեան նահատակներու յիշատակին:

Բոլոր նիւթերու ներկայացման եւ օրակարգի կէտերու քննարկման իրենց մասնակցութիւնը կը բերեն Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական սկաուտական յանձնախումբի անդամները, որոնք համագումարին առընթեր կ'ունենան իրենց աշխատանքային յատուկ նիստերը:

Այնուհետեւ, Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Կարպիս Գապասագալեանի եւ Բագրատ Եսայեանի ներկայութեամբ, համագումարը ընթացք կ'առնէ բաւական ծանրաբեռնուած օրակարգով. Հ.Մ.Ը.Մ.ի ռազմավարական ծրագրի սկաուտական բաժնի ներկայացում, շրջաններու

Նշենք, որ համա-Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետական նախորդ համագումարները տեղի ունեցած են 1982-ին (Աթէնք), 1988-ին (Գալիֆորնիա), 1996-ին (Սիտնի), 2004-ին եւ 2008-ին (Ծաղկաձոր):

Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻԲԱՆԱՆԻ ՅՈՒԹՊՈԼԻ ՎԵԹԵՐԱՆՆԵՐՈՒ ՀԱՒԱՔՈՅԹ՝ ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ՄԷՋ

Վերջերս Լոս Անճելըս այցելեց Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Ֆուլթպոլի նախկին աստղերէն, վաթսուներկան եւ եօթանասուներկան տարիներու Հ.Մ.Ը.Մ.ի Ֆուլթպոլի փառքի օրերու կերտիչներէն՝ եղբ. Հրայր

Տէր Թորոսեանը: Այս առիթով, լոս անճելըսաբնակ վեթերաններու խումբը գեղեցիկ գաղափարը ունեցաւ յարգանքի եւ երախտիքի ընկերային հաւաք մը կազմակերպելու, եւ խումբ մը համակիրներու, միութենական պատասխանատուներու, եղբ. Հրայր

տուներու, եղբ. Հրայրի ընկերներուն ու նախկին սաներուն հետ վայելելու ներկայութիւնը սիրուած եւ յարգուած այս Հ.Մ.Ը.Մ.ականին: Հաւաքին ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամներէն եւ վեթերաններու խումբի համակիրներէն եղբայրներ Գօգօ Պալեանն ու Մանուէլ Մարսէլեանը, նաեւ՝ Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Թովմաս Տէօքմէճեան, Հ.Մ.Ը.Մ.ի շարքերէն անցած նախկին Ֆուլթպոլիստ Յովիկ Սալիպա, Խաթակ Տիքիճեան, տոբթ. Արմէն Կէօնճեան, Զաքար Զորպաճեան եւ Յարութ Սասունեան:

ՑԱՒԱԿՑԱԳԻՐ


Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը կը գուժէ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի շրջանի վաստակաւոր եղբայրներէն, «Արժանեաց» շքանշանակիր Յովհաննէս Ծատուրեանի մահը, որ պատահեցաւ Կիրակի, 17 Յունիս 2012-ին:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ




Թիւիւն հիւն երը

MARZIG SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN
 مارزیک مجله رياضية شهرية تصدرها جمعية الهولمتن الرياضي




Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

- Խմբագրական 2
- Անդրադարձ 3
- Մեր Տեսակցութիւնները 6
- ճանչնանք 8
- Մասնաձիղէ Մասնաձիղ 12



ԲԱԺԻՆՆԵՐ

- Միջազգային 9
- Մանկապատանեկան 38
- Տարբեր Հայեացքով 40



Մարզական ամսաթերթ
 Հրատարակութիւն՝ Հ.Մ.Ը.Մ.ի
 ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

3107 ՏԱՐԻ, 2012, ԹԻՒ 5 (359)

ԽՄԲԱԳԻՐ
 Վիգէն Աւագեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
 Սեդա Պէշլեան (Լիբանան),
 Սեւան Նազարեան (Ֆրանսա),
 Մարո Քէշիշեան (Արեւմտեան Մ.
 Նահանգներ), Յակոբ Խաչատուրեան
 (Արեւելեան Մ. Նահանգներ), Տիրան
 Շահինեան (Փանատա), Ռազմիկ
 Յովհաննիսեան (Հայաստան)

ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄ
 Պատրիկ Կիւլպենկեան, Գրիգորիս
 Պողարեան, Արօ Մոսիկեան
 (Լիբանան), Յարութ Սատէնլեան
 (Արեւմտեան Մ. Նահանգներ),
 Զարեհ Տերվիշեան (Փանատա)

Էջադրում - Արշօ Պալեան
 Գրաշարութիւն - Շողիկ Պոյաճեան
 Colour Separation - Photogravure Paklayan
 Կողքի Ձեւաւորում Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷ
 Պուրժ Համուտ, ճինիշեանի Թաղ
 «Սեւան» Շէնք, Գ. Յարկ
 Հեռ: 01/248043, Fax: 01/260117
 E-mail: marzig@homenetmen.org
 P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

ՑՐՈՒՄ

Լիբանանի մէջ թերթին
 հատավաճառի սակն է 4000 Լ.ո.:
 Տարեկան բաժանորդագրութեան սակ
 ծշղուած է 48000 Լ.ո.:
 Լիբանանէն դուրս թերթին
 բաժանորդագրութիւնը
 կը կատարեն Հ.Մ.Ը.Մ.ի Մեկուսի
 եւ Շրջանային Վարչութիւնները:
 Թերթը ուղղակի Լիբանանէն
 կը ստացուի անձնական
 բաժանորդագրութեամբ
 (Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան
 եւ Եւրոպական երկիրներ \$70,
 Ամերիկա եւ Աւստրալիա՝ \$75):



Խ
Ն
Բ
Ա
Գ
Ն
Ր
Ն
Ա
Ն
Ն

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

(ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ
6-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ԱՌԻԹՈՎ)

Յանրաժանօթ ծշմարտութիւն է, որ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութիւնը 100-ամեայ իր վաստակով հայ կեանքին հասցուցած է անթիւ տղաք ու աղջիկներ, որոնք մարդկային ու ազգային վեհ գաղափարներով տոգորուած՝ շեշտօրէն մնացած են հայ եւ գիտակցօրէն ապրած են հայկականութեան իրենց պարժանքը:

Նոյնքան ծանօթ իրողութիւն է, որ 100-ամեայ այս իրագործումը Հ.Մ.Ը.Մ. մեծ մասամբ կը պարտի սկաուտական շարժումի իր պատասխանատուներու անձնագոհութեան, հաւատքին ու կամքին:

Բայց կ'արժէ այս հաստատումներէն անդին անցնիլ եւ հարց տալ, թէ ի՞նչ կարելորութիւն, ի՞նչ աշխատանք ու ի՞նչ ժամանակ կը տրամադրուի սկաուտական շարժումի նման պատասխանատուներու *պատրաստութեան* համար:

Սկաուտական շարժումի պատասխանատուները՝ Շրջանային ընդհանուր խմբապետներ, Շրջանային թէ միաւորներու խմբապետներ ու խմբապետուհիներ կոչուած են նոր սերունդը որպէս մարդ, որպէս հայ ու որպէս Հ.Մ.Ը.Մ.ական կազմաւորելու, այսինքն՝ այնպէս խօսելու, այնպէս վարուելու եւ այնպէս գործելու, որ իրենց հոգածութեան յանձնուած սկաուտական շարքերը կարենան լաւապէս իրենք զիրենք ճանչնալ, մարդկային ու ազգային վսեմ արժէքներու տիրանալ, եւ թէ՛ անհատական ու թէ՛ հաւաքական իրենց կեանքին մէջ յաջողութիւններու հասնիլ:

Սակայն *կազմաւորելու* համար հարկ է նախ *կազմաւորուած* ըլլալ: Կարելի չէ ամէն ինչ ձգել պատահականութեան, անձնական նախասիրութեան, կամ սոսկ՝ անհատական կարողութեան ու սեփական ճիգերով ձեռք բերուած գիտութեան եւ հմտութեան: Եթէ կեանքը պայքար մըն է կամ պատերազմ մըն է, ինչպէս ըսուած է յաճախ, հարկ է սկաուտական շարքերու պատասխանատուներուն փոխան-

ցել այդ պայքարին նորագոյն «զենքեր»ը եւ անոնց գործածութեան եղանակները: Այլապէս, դաստիարակներ չեն կրնար յաջողիլ իրենց առաքելութեան մէջ, եթէ երբեք համապատասխան կազմաւորումը չեն ունեցած:

Ճիշդ է, որ սկաուտական աշխատանքներու յաջողութեան համար՝

Ակմբային պայմանները կարելոր են, հաղավայր-հաւաքավայրի յարմարութիւնները կենսական են,

Նիւթական միջոցները պայման են,

Սկաուտական գիրքերն ու անոնց ներկայացման ձեւերը հիմնական են,

Սկաուտ պատասխանատուներ մասնաճիւղերու ներկայացուցիչներ եւ ծնողներ կապերը անհրաժեշտ են,

Եւ դեռ պահանջներու շարքը կրնայ երկա՛ր ըլլալ,

Բայց սկաուտ պատասխանատուի մը անձն ու տիպարն են ամէնէն կարելորը, «ամէն բանէ վեր»ը:

Հետեւաբար, հրամայական եւ առողջ մօտեցումը պիտի ըլլայ այն, որ անձնական կարողութիւնը եւ պատրաստութիւնը, նախանձախնդրութիւնը եւ ազգային առաքելութեան գիտակցութիւնը մէկ կողմ դրած, *մասնագիտական համագումարներով*, սկաուտ պատասխանատուներ հետեւողականօրէն կատարելագործեն իրենց գիտելիքներու պաշարը, արժեւորեն իրենց փորձառութիւնները եւ իսկապէս *արդիւնաւետ աշխատանքի* մը վերածեն իրենց նպատակն ու գործը:

Ահա թէ ո՛ր պէտք է փնտռել գլխաւոր առաջադրանքը համա-Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետական համագումարներու, որոնք մարդուժի պատրաստութեան հրամայական այս պարտքն է, որ կը կատարեն հանդէպ միութեան, հայութեան եւ Հայ Դատին:

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետական 6-րդ համագումարը սկաուտական նման համագումարներու վեցերորդ օղակն է պարզապէս:

ՄԻՇՏ ՊԷՏՔ Է ՆՈՐ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ՃՇՊԵՆՔ ԵՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ՁԵՒՈՎ ՅԱՌԱՋ ԸՆԹԱՆԱՆՔ

Կ'ԸՍԷ Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ
ԵՂԲ. ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ «ԱԶԱՏ ՕՐ»
ՕՐԱԹԵՐԹԻՆ ՀԵՏ ԻՐ ՀԱՐՑԱԶՐՈՅՑԻՆ ԸՆԹԱՑՔԻՆ

Շուտով կը լրանայ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութեան քառամեայ նստաշրջանին առաջին տարին: Ինչպիսի՞ աշխատանքներով յատկանշուեցաւ անցնող տարին:

- Ինչպէս ծանօթ է, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութիւնը կը գործէ քառամեայ նստաշրջանով: Մեր կազմը ընտրուեցաւ անցեալ տարուան Սեպտեմբեր 10-ին: Կազմը կը բաղկանայ 13 հոգիէ, աշխարհագրական բաժանումով: Նստավայրը եւ դիւանը կը գտնուին Լիբանանի մէջ:

Այս կազմը առաջին օրէն բաւական լուրջ մարտահրաւէրի մը առջեւ դրուեցաւ: Արդէն ժողովէն հիմնական ծրագիր մը դրուած էր մեր առջեւ՝ ռազմավարական ծրագրի մշակումը: Մեր իրականութեան մէջ, Հ.Մ.Ը.Մ.ը առաջին կազմակերպութիւնն է, որ կը մտածէ, թէ տասը տարիէն ո՞ւր կ'ուզէ տեսնել միութիւնը: Հետեւաբար, կը տեսնէք, որ բաւական լաւ որոշում էր այս: Ժողովը ինքնին արդէն որոշ սկզբունքներ ճշդած էր այս գծով: Եկանք այն եզրակացութեան, որ 11 կէտերէ բաղկացած ռազմավարական ծրագիրը պէտք է մէկ առ մէկ գործադրութեան դրուի: Արդէն գործնականի անցանք: Շուտ լուծուելիք հարցեր չէին, քանի որ տասնամեակի մը վրայ ծրագրաւորում է:

Անցնող տարի կամաց-կամաց ընտելացանք այս հարցին գործնականացման հանգրուաններուն:

Այս տարի կը զուգահիշի հայ սկաուտական շարժումի հիմնադրութեան 100-ամեակին: Ուրեմն, 2012-ին արժանավայել կերպով կը նշենք այս կարեւոր թուականը:

Թեւակոխած ենք արդէն ամառնային շրջանը, ուր բանակումներ կը կազմակերպուին: Ի՞նչ կը ծրագրէք այս ամրան համար:

- Այս տարի պիտի իրագործուի համա-Հ.Մ.Ը.Մ.ական երկու ծրագիր: Առաջինը միջ-ցամաքամասային խաղերու կազմակերպումն է, որ Նոյեմբերին Արժանթինի մէջ տեղի կ'ունենայ: Այս ալ առաջին անգամ ըլլալով կը կատարուի, քանի



որ Արեւելեան, Արեւմտեան Ամերիկաները, Գանատան, Աւրստրալիան եւ Հարաւային Ամերիկան պիտի համախմբուին Արժանթինի մէջ:

Մնացեալ ցամաքամասերը բաժնուած են Եւրոպա եւ Միջին Արեւելք (Հայաստանն ալ հոն կը մտնէ):

Օգոստոսին տեղի պիտի ունենայ հայ սկաուտութեան 100-ամեակին նուիրուած տօնակատարութիւնը: Եթէ պատմութիւնը քիչ մը թերթատենք, պիտի տեսնենք, թէ հայ սկաուտութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան զուգահեռ ընթացած է: Մեր միութեան ռահվիրաներն են Շաւարշ Քրիսեան, Յովհաննէս Հինդլեան եւ Գրիգոր Յակոբեան:

Կազմակերպողը պիտի ըլլայ Հայաստանի մեր կազմակերպութիւնը: Նկատի առնելով որ առաջին անգամն է որ այսպիսի կարեւոր տօնակատարութիւն մը տեղի պիտի ունենայ, առնուած է նաեւ Հայաստանի Հանրապետութեան նախագահին հովանաւորութիւնը: Ձեռնարկները պիտի իրագործուին Բիւրականի մեր բանակավայրին մէջ, ուր պիտի համախմբենք աշխարհի չորս ծագերէն սկաուտներ: Ներկայ պիտի ըլլան կովկասեան երկիրներէ ներկայացուցիչներ, սկաուտական միջազգային Ֆետերասիոնի քարտուղարը Զուիցերիա-

յէն, եւ համահայկական կառույց ունեցող կազմակերպութիւններու ներկայացուցիչներ:

Մէկ շաբթուան բանակում տեղի պիտի ունենայ, զուտ՝ սկաուտական: Բացման հանդիսութեան պիտի նշուի հայ սկաուտութեան 100-ամեակը: Կ'ակնկալենք, որ Հայաստանի պետութիւնը եւս իր ներդրումը ունենայ այս տօնակատարութեան իրականացման մէջ, որովհետեւ համաշխարհային տարողութեամբ գործ մըն է ան:

Մենք չուզեցինք խճողել մեր ձեռնարկները, որպէսզի որքան կարելի է աւելի լայն մասնակցութիւն ապահովուի անոնց: Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ բանակումին թուականը դեռ հեռու է. նախատեսուած է զայն կատարել 2014-ին:

Այս տարի Օգոստոսին տեղի պիտի ունենայ համա-Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետական 6-րդ համագումարը, որ կը կազմակերպուի իւրաքանչիւր քառամեակի երկրորդ տարին:

2013-ը տրամադրած ենք համա-Հ.Մ.Ը.Մ.ական 9-րդ մարզախաղերուն, որոնք տեղի պիտի ունենան Օգոստոս ամսուն, Երեւանի մէջ: Նաեւ կայ 2014-ի համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումը, նորէն Օգոստոսին, Բիւրականի մէջ: Հիմնական ձեռնարկները ասոնք են:

Մեր կառույցը ինչպիսի՞ փոփոխութիւններ կրած է վերջին տարիներուն: Արաբական էմիրութիւններու մէջ հաստատուած հայրենակիցներու հոսքը կամ կովկասեան շրջաններու մէջ հետզհետէ աւելցող թիւերը նոր մասնաճիւղերու հիմնադրութեան կարելիութիւններ ստեղծած են:

- Մենք փորձեցինք 2008-ին մասնաճիւղ մը հիմնել Մոսկուայի մէջ, որ լաւ տուեալներով սկսաւ, սակայն արդիւնք չտուաւ: Հիմա տեղաշարժ մը գոյութիւն ունի դէպի արաբական անապատային երկիրներ: Վերջերս, Արամ Ա. Վեհափառը Արաբական էմիրութիւններ այցելեց եւ հիմնարկէքը կատարեց տեղույն եկեղեցույ: Բոլոր տուեալները ցոյց կու տան, որ գաղութը կ'ուռճանայ: Մեզի յոյս կը ներշնչեն Տուպայն ու Շարժան: Եւրոպայէն ալ լաւ երեւոյթ կայ: Հոլանտայի շրջանն է, ուր Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարին շուրջ սկսած են հաւաքուիլ Պաղտատէն գաղթած հայրենակիցներ: Հիմա կազմակերպչական մեծ աշխատանք ունին ընելիք հոն: Ալմելոյի մէջ մենք արդէն մասնաճիւղ մը ունինք, գաղափարը կայ նոր մասնաճիւղ մը ստեղծելու Ալմելոյէն 400 քիլոմետր հեռու շրջանի մը մէջ, ուր արդէն 30-ի շուրջ անդամներ մեզի դիմում կատարած են:

Յուսամ որ արդիւնք կու տան այս ջանքերը: Մենք որոշած ենք արագօրէն չընթանալ այս գործընթացին մէջ, այլ պահել միաւորի կարգավիճակը, մինչեւ որ հասուննայ գործունէութիւնը, նախքան մասնաճիւղի վերածումը:



Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային ներկայացուցչական 67-րդ ժողովը կը լսէ ընթացաւարտ կազմին երկամեայ տեղեկագիրը:

Լուրջ մտահոգութիւն ունիմ Ա.Պ.Հ. երկիրներուն համար, ուր մեծ ուժ կայ, հոն հաստատուած մեր հայրենակիցներու ներկայութեամբ, բայց այդ զանգուածները համախմբելու գործը տարբեր աշխատանք մըն է:

Անշուշտ, մեզի կը մտահոգէ Միջին Արեւելքի երկիրներու անկայուն իրավիճակը, ուր ցամաքամասային խաղեր կազմակերպելու հնարաւորութիւն չկայ ներկայ պահուն:

Անցեալ տարեշրջաններուն, երբ կազմակերպական քառամեակներ ալ յայտարարեցինք, մօտէն հետեւեցանք մասնաճիւղերու կազմաւորման եւ տեղական գաղութներու հնարաւորութիւններուն: Շատ մօտէն հետեւած ենք բոլոր պարագաներուն: Կրնանք օրինակը տալ Մարսէյի «Արծիւ» միութեան, որուն 400 տղաքը միացան Հ.Մ.Ը.Մ.ի: Լուրջ աշխատանք եւ հետեւողականութիւն կ'ուզէ այս գործը:

Մարդիկ կը կարծեն, որ յարաբերութիւնները կարելի է շատ դիւրին մշակել ելեկտրոնային արհեստագիտութեան միջոցներով: Անշուշտ, կարելի է, բայց թոյլ տուէք ըսեմ, որ բաւարար չէ, որովհետեւ ոգին ու խանդավառութիւնը անձնական յարաբերութեամբ միայն կարելի է մշակել: Մենք պէտք ունինք տղոց, որոնք պայուսակները դրան կողքին պիտի ունենան եւ պատրաստ պիտի ըլլան տեղ հասնելու, մօտէն հետաքրքրուելու, հարցերը լուծելու: Այսօրուան երիտասարդը կու գայ Ֆութպոլ կամ պասքէթ խաղալու: Միշտ գիտակցաբար չէ որ կը մօտենայ ակումբին կամ հայկական մարզադաշտին: Ժամանակին մեզի համար Ֆութպոլն ու պասքէթը միջոցներ էին երիտասարդութիւնը ակումբ բերելու համար: Հիմա այդպէս չէ: Պայմանները փոխուած են: Երիտասարդութիւնը պիտի գայ, բայց մենք պէտք է պատրաստ ըլլանք զայն պահելու մեր միութեան մէջ:

Սկաուտութեան մէջ մենք կրնանք սորվեցնել հիմնական գաղափարներ՝ խումբ, ժողով, դիւան, հաւաքական աշխա-

տանք...: Երբ պատկերված են կը սորվին այս հիմնական կէ-տերը, սկառտներ կը գիտակցին, թէ այս բոլորը իրենց հայկականութիւնը պահելու ազդակներ են: Նոյնը պէտք է կիրարկել նաեւ մարզական մեր խումբերէն ներս, ուր աւելի արհեստավարժ մակարդակի մօտեցումներ կան, դժբախտաբար:

Իմ զօրաւոր համոզումս է, որ եթէ մենք սկառտութիւն պիտի կիրարկենք, հայկական սկառտութիւն պիտի կիրարկենք, դէմ կանգնելով համաշխարհայնացման երեւոյթներուն, ուր մարզական հարցերն ալ քաղաքականութեան վերածուած են...

Հայաստանի մէջ մեր կառույցը ինչպիսի՞ն է:

- Հայաստանի մէջ մենք միայն սկառտական բաժին կը պահենք. հոն մարզական գործունէութիւն չունինք, որովհետեւ մարզական կեանքը ամբողջութեամբ արհեստավարժ դրութեամբ է: Մեր հայրենակիցները պատանի տարիքէն կրնան մարզական դպրոցներ երթալ: Հարց չկայ հոն:

Սկառտականին մէջ մենք պէտք է նուազ շեշտենք ազգային բաժինը: Քիչ մը տարբեր է հարցը, երբ կը բաղդատենք Սփիւռքի գաղութներուն մէջ գործող երիտասարդական մեր շարժումներուն հետ: Հայաստանի մէջ պէտք չկայ սկառտը Ծիծեռնակաբերդի թանգարան տանելու, ինքը արդէն կ'երթայ իր դասարանով, իր ընտանիքով: Պէտք չկայ ցոյց տալու Արարատը կամ Արագածը, որ ամէնօրեայ տեսարան է իրեն համար: Սերունդը իր սեփական հողին վրայ կը տեսնէ ու կը շօշափէ այս բոլորը:

Արցախի մէջ կառույց ունի՞նք:

- Ափսո՛ս, որ չենք կարողացած մինչեւ հիմա կառույց ստեղծել Արցախի մէջ: Կան ծրագիրներ: Մեր ճիգերը պիտի աշխուժացնենք, գէթ այս քառամեակին խթանելու համար այդ աշխատանքը:



Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի պատուոյ նախագահ եղբ. Կարպիս Գույումճեանի հետ:

Ի՞նչպէս կը գնահատէք Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի շրջանը:
- Նախ ըսեմ, որ մեծ յոյսով կ'ակնկալեմ Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի շրջանին մասնակցութիւնը հայ սկառտութեան 100-ամեակի տօնակատարութիւններուն:

Պէտք է խոստովանիմ, որ ես Յունաստանը սիրած եմ: Յունաստանը այն գաղութներէն մէկն է, որ մարդուժ տալու, գործեր կազմակերպելու մեծ ներուժ ունեցած է: Անցեալին Պատգամաւորական երեք ժողովներ, ինչպէս նաեւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղեր եւ քանակուժ կազմակերպուած են այստեղ, շատ յաջող ձեւով:

Մենք Յունաստանի մէջ ունինք լաւ գաղութ մը, որուն կարելի է մասը ներգրաւուած է Հ.Մ.Ը.Մ.ի շարքերէն ներս: Կայ նաեւ հաւատաւոր մարդոց թիւ մըն ալ, որ ինչ-ինչ պատճառներով հեռու մնացած է այս շրջանակէն: Պէտք է զանոնք համախմբել միութեան շուրջ: Եթէ համախմբուին ես կը կարծեմ, որ արդիւնքը լաւ կ'ըլլայ:

Յունաստանը ուժ ունի: Քիչ մը ցնցում կ'ուզէ: Մենք պատրաստ ենք մեր բոլոր ուժերով մասնակից ըլլալու շրջանի կազմակերպչական աշխատանքի աշխուժացման: Պէտք է թափ տալ հզօրացման ճիգերուն եւ բռնել վերելքի ճամբան:

Շաբաթ մը առաջ ես Գանատա էի, Մայիս 28-ի տօնակատարութիւններուն մասնակցելու համար: Թոյլ տուէք հոս նշեմ Գէմպրիճի մասնաճիւղին պարագան: Երբ ութ տարի առաջ Գանատա այցելեցի, ուղեցի մօտէն տեսնել մասնաճիւղերը: Մոնթրէալ եւ Թորոնթօ գացինք, իմանալով թէ մնացեալ մասնաճիւղերը կազմալոյծ վիճակի մէջ են: Ես պնդեցի, ուղեւով տեսնել Գէմպրիճի մասնաճիւղը, գիտնալով գիտակից եւ աշխատող ուժերու ներկայութիւնը այստեղ: Գացինք: Երկար ճանապարհ էր:

Շրջանի տղոց հետ հանդիպեցայ: Իրենցմէ խնդրեցի, որ նոյնիսկ հինգ հոգիով գործի սկսին: Մղումը տալէ ետք անոնց, սկսանք հետապնդել զիրենք: Հանգիստ չձգեցինք: Ուրիշ կապեր ալ հաստատուեցան: Անկէ ետք սկսանք ուրախալի լուրեր ստանալ: Անոնք շուտով վերակազմակերպուեցան եւ աշխուժացան: Աշխատանքի մէջ միակամ եղան:

Անցեալ Դեկտեմբերին մեզի հեռաձայնեցին, ըսելով որ մասնաճիւղին 35-ամեակը պիտի տօնեն եւ կ'ուզեն որ ներկայ ըլլամ: Պահ մը սառեցայ, այնքան մեծ ուրախութիւն զգացի: Եւ պահը եկաւ՝ այս Մայիս 28-ի տօնակատարութեանց հետ գուգահեռ նշուեցաւ Գէմպրիճի մասնաճիւղին 35-ամեակը: Թորոնթօյի շեփորախումբը եկած էր, սկառտներ, ժողովուրդ: Աննախընթաց յաջող ձեռնարկ էր: Ես մեծապէս կը գնահատեմ ընդհանրապէս Գանատայի տղոց եւ յատկապէս Գէմպրիճի մասնաճիւղի տղոց ջանքերը, որոնք այս գեղեցիկ արդիւնքին յանգեցան:

Ես նոյն ներուժը կը տեսնեմ Յունաստանի մէջ: Առջեւէն քալող կ'ուզէ, հետեւողականութիւն եւ ջանք կ'ուզէ:

Մենք միշտ պէտք է նոր առաջադրանքներ ճշդենք եւ կազմակերպուած ձեւով յառաջ ընթանանք, դէպի նոր եւ աւելի աշխուժ ապագայ:

ՊԷՏՔ Է ԱՐԴԻԱԿԱՆԱՑՆԵԼ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՄԵՐ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՉԵԻԵՐԸ

«ՄԱՐԶԻԿ»ԻՆ Կ'ԸՍԷ Հ.Մ.Ը.Մ.Ի ՍՈՒՐԻՈՅ
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՆԱԽԿԻՆ ԽՄԲԱՊԵՏՈՒՀԻ
ՔՈՅՐ ՍԵԴԱ ՏԷՐ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ-ԿԷՐԿԷՐԵԱՆ

Հարցազրույց վարեց՝ Բաֆֆի Սիւլահեան
ՀԱԼԷՊ

Միութենական ծառայութիւնը մարդոց մէջ կը սերմանուի փոքր տարիքէն: Ծառայութիւնը տարիք չի ճանչնար, պարզապէս ան կը զարգանայ, կը մեծնայ, ենթական հասցնելով պատասխանատուութեան բարձրագոյն աստիճաններու եւ պաշտօններու: Քոյր Սեդա Տէր Աբրահամեան-Կերկերեան կը հանդիսանայ Հ.Մ.Ը.Մ.ի եւ Ս.Օ.Խ.ի երկար տարիներու վաստակաշատ ծառայողներէն մէկը:



Ան նախնական իր ուսումը ստացած է Ազգ. Հայկազեան վարժարանին մէջ, ապա՝ Քարէն Եփփէ Ազգ. Գեմարանին մէջ: Երկար տարիներ պաշտօնավարած է Ազգ. Հայկազեան մանկապարտէզին մէջ:

Փոքր տարիքէն քոյր Սեդա անդամակցած է Ս.Օ.Խ.ի արեւուշական շարքերուն, ուր ստանձնած է պատասխանատու պաշտօններ: Անոր վստահուած է Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային խմբապետուհիի պաշտօնը: 2010-ին ան արժանացած է Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան «Արարատեան» կարգին:

Քոյր Սեդա, ձեր օրերուն արեւուշական շարժումը կը գործէր Ս.Օ.Խ.ի հովանիին տակ: Ինչպիսի՞ աշխատանքներ կը կատարէիք արդեօք:

- Ընդհանրապէս, այդ օրերուն մեր գործունէութիւնը

չէր տարբերեր տղոց գործունէութենէն: Կիրակնօրեայ մեր գործունէութիւնը կը կատարէինք Ազգ. Հայկազեան վարժարանի նախկին տղոց բաժնին մէջ, իսկ մեր շաբաթական ժողովները՝ Ազգ. Պատասպարանէն ներս: Ունէինք աշխույժ ու խանդավառ մթնոլորտ: Իւրաքանչիւր խումբ անկիւն մը կը քաշուէր եւ կ'իրագործէր իր ծրագիրները: Նոյնիսկ օրեր եղան, երբ սենեակները իբրեւ ժողովավայր օգտագործեցինք: Այդ շրջանին մենք կը կատարէինք ձեռագիր աշխատանքներ, որոնք այսօր նորոյթ կը նկատուին: Օտարալեզու թերթերէ նիւթեր հաւաքելով մենք կը թարգմանէինք գանոնք եւ կը պատրաստէինք պատի թերթեր: Կը կազմակերպէինք արշաւներ՝ հեռու եւ մօտակայ վայրեր: Պատասպարանին մէջ ունէինք մեր սենեակը՝ տանիքը, որ բոլորիս հոգատարութեան առարկան էր. կը մաքրէինք, կը կահաւորէինք ու կը ներկէինք գալստ: Մէկ խօսքով, այդ շրջանին մեր պատասխանատուները լուրջ եւ տքնաջան աշխատանք կը տանէին: Մենք ալ իրենց օրինակին հետեւելով, կարողացանք բծախնդրութեամբ շարունակել նոյն գործը եւ, ամէնէն կարեւորը, որ կարողացանք այդ գործը փոխանցել մեզի յաջորդող սերունդին: Անոր համար ես հպարտ եմ աստիճանաւորներովս, որոնք ներկայիս պատասխանատու դիրքերու վրայ են գաղութին մէջ:



Իսկ հետագային, Ս.Օ.Խ.ի հովանիէն Հ.Մ.Ը.Մ.ին անցնելով, որեւէ տարբերութիւն ըզգացի՞ք:

- Մենք երբեք հեռու չէինք Հ.Մ.Ը.Մ.ի սկառուտական խումբերէն: Ընդհանրապէս, մենք մեր աշխատանքները, սեմինարները եւ գործունէութիւնները միասին կը կատարէինք: Ունէինք սկառուտական միացեալ յանձնախումբ մը, որուն անդամները Հ.Մ.Ը.Մ.ի եւ Ս.Օ.Խ.ի խմբապետ պատաս-

խանատուներն էին: Կը կազմակերպուէին սեմինարներ, դասախօսութիւններ, տեսերիզի ցուցադրութիւններ եւ այլ տեսակի աշխատանքներ, որոնց նպատակն էր միատեղ հաւաքել տարագաւոր քոյրերն ու եղբայրները, մշակելով միօրինակ ծրագիրներ: «Մաշաւէ»ի մէջ մենք նշեցինք գայլիկին տօնը, որուն մասնակցեցան շուրջ 450 քոյրեր եւ եղբայրներ: Այդ օրերու պատասխանատուներէն էին եղբ. Մանուկ Քէօշկէրեանը, եղբ. Վիգէն Գապագեանը, քոյր Քնար Ֆուռնճեանը, եղբ. Վիգէն Նազարեանը, եղբ. Արտօ Համբարձումեանը, քոյր Սիրվա Եուզպաշեանը եւ քոյր Զեփիւ Մուղալեանը: Մենք նոյնիսկ կատարած ենք ձմեռնային միացեալ դպրոց-բանակում մը՝ կազդուրման կայանէն եւ էքիզօլուխի բանակավայրէն ներս:



ըր վար առնել, բայց տէր եւ տիկ. Էպլի-ղաթեաններուն միջնորդութեամբ, մենք յաջողեցանք բանակումը մինչեւ վերջ կատարել վրաններու տակ: Յատկանշական դէպք մըն ալ եղաւ ուրիշ բանակումի մը ընթացքին, երբ սկաուտական պետական Ֆետերասիոնին կողմէ մեզի թելադրուեցաւ, որ մեզի հետ մնայ տեղացի տղայ ներկայացուցիչ մը: Ինչպէս գիտէք, մենք բոլորս քոյրեր էինք: Մենք կարողացանք համոզել զիրենք, որ ներկայացուցիչը բանակավայրէն ներս չգիշերէ: Յաջորդ տարին, Ֆետերասիոնին կողմէ նշանակուած ներկայացուցիչը եղաւ քոյր մը, որ բանակումի ամբողջ տեւողութեան մնաց մեզի հետ:

Հանրային եւ միութենական պատասխանատու ի՞նչ պաշտօններ վարած էք:

- Ս.Օ.Խ.ի մէջ ծառայութիւնս սկսած եմ որպէս արծուիկ: Երբ արեւուշական շարժումը Հ.Մ.Ը.Մ-ին միացաւ, ես ստանձնեցի Սուրիոյ Շրջանային խմբապետուհիի պաշտօնը: Եղած եմ Համագայինի թատերական եւ պարահումբի յանձնախումբերու, ինչպէս նաեւ՝ Ս.Օ.Խ.ի մանկամսուրի յանձնախումբի անդամ: Ներկայիս վարչական եմ Ս.Օ.Խ.ի «Անի» մասնաճիւղին: Մասնակցութիւնս բերած եմ Պարսկաստանի մէջ տեղի ունեցած շրջանային բանակումին: Հալէպէն մասնակցողներուն թիւը եղած է վեց քոյր, երկու եղբայր: Հալէպի մէջ մենք ունեցած ենք նաեւ միջ-միութենական խորհուրդ մը, կազմուած՝ Հ.Մ.Ը.Մ-ի, Հ.Ե.Ը-ի, Հ.Մ.Մ-ի եւ Վասպուրականի խումբերէն: Մաս կազմած եմ այդ խորհուրդին:

Ձեզի համար ո՞րն է միութենական ձեր կեանքի յատկանշական դէպքը կամ բանակումը:

- Երբ արեւուշական շարքեր փոխանցուեցայ, սկսայ մասնակցութիւնս բերել արեւուշական բանակումներու, որոնք այդ շրջանին տեղի կ'ունենային Քեսապի ներկայ ակումբին մէջ: Հետագային բանակումները սկսանք կատարել կազդուրման կայանէն ներս: Այդ օրերուն արգիլուած էր բանակումները վրաններու տակ կատարել: 1988 թուականին, կը յիշեմ, մենք ունեցանք վրանարնակ բանակում մը՝ կազդուրման կայանին կիցը գտնուող հողաչերտի մը վրայ, միայն արեւոյշներով: Բանակումին երկրորդ օրը, յանկարծ, Քեսապի պետական պատասխանատուներուն կողմէ մեզի թելադրուեցաւ վրաններ-

ըր վար առնել, բայց տէր եւ տիկ. Էպլի-ղաթեաններուն միջնորդութեամբ, մենք յաջողեցանք բանակումը մինչեւ վերջ կատարել վրաններու տակ: Յատկանշական դէպք մըն ալ եղաւ ուրիշ բանակումի մը ընթացքին, երբ սկաուտական պետական Ֆետերասիոնին կողմէ մեզի թելադրուեցաւ, որ մեզի հետ մնայ տեղացի տղայ ներկայացուցիչ մը: Ինչպէս գիտէք, մենք բոլորս քոյրեր էինք: Մենք կարողացանք համոզել զիրենք, որ ներկայացուցիչը բանակավայրէն ներս չգիշերէ: Յաջորդ տարին, Ֆետերասիոնին կողմէ նշանակուած ներկայացուցիչը եղաւ քոյր մը, որ բանակումի ամբողջ տեւողութեան մնաց մեզի հետ:

Ինչպէ՞ս կ'արժեւորէք սկաուտական ներկայ աշխատանքները:

- Դժբախտաբար, ներկայ սերունդը կը կարծէ, թէ սկաուտութիւնը ժամանակավրէպ շարժում մըն է: Ես կը կարծեմ, որ սկաուտութիւնը մնայուն է եւ անցեալի շատ մը ժամանակներէն աւելի կարեւոր է, որովհետեւ ան առիթը կ'ընծայէ պատանիին եւ փոքրիկին ձերբազատելու սենեկային նստակեաց զբաղումներէն եւ նետուելու բնութեան գիրկը: Առիթ կու տայ անոր իր մէջ զարգացնելու ստեղծագործական ոգին, գայն դարձնելով ընկերային կեանքի կարեւոր մէկ անդամը եւ վերջապէս, սկաուտութիւնը իսթան կը հանդիսանայ անոր՝ զօրացնելու ազգային ոգին, որ դժբախտաբար նահանջի մէջ է այսօր:


Իբրեւ եզրափակում, ի՞նչ կ'ուզէք փոխանցել:

- Խօսքս կ'ուղղեմ ներկայ պատասխանատուներուն, որոնք պարտաւոր են ինքնագարգացման ճամբով գիտելիքներ ձեռք բերել, արդիականացնելու համար դաստիարակչական իրենց ծրագիրները փոխանցելու ձեւերը, քայլ պահելով ներկայ պայմաններուն հետ: Սկաուտ-Խորհուրդներուն թելադրանքս է, որ զարկ տան դաստիարակչական սեմինարներու, մանաւանդ պատասխանատու կազմերու մակարդակին, ըլլան անոնք մանկավարժական թէ յարաբերական նիւթերով, որովհետեւ անոնք են, որոնք պիտի դաստիարակեն ներկայ սերունդը: Խնդրանքս է նաեւ, որ աւելի բծախնդիր ըլլան պատասխանատուներու ընտրութեան մէջ, որովհետեւ պատասխանատուին միջոցով է, որ կը սիրաշահինք մեր անդամները, եւ եթէ սկաուտը չսիրէ իր պատասխանատուն, ան կը հեռանայ միութենէն: Վերջապէս, կ'ուզեմ շնորհակալական խօսք ուղղել ձեզի, որ «Մարգիկ»ին միջոցով առիթը ընծայեցիք ինձի վերյիշելու անցեալի օրերը:



ՎԱՍՏԱԿԱԲՈՐՆԵՐԷՆ ԱՆՈՒՆ ՄԵ՝ ԵՂԲ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐԱՊԱՃԵԱՆ

Արմեն Քեօզկերեան
ՀԱԼԷՊ



«Հայ երիտասարդութեան կազմակերպութեան կենսական գործին մէջ մեծ է դերը Հ.Ս.Ը.Մ.ին այսօրուան հայ կեանքին մէջ, յատկապէս սփիւռքեան ներկայ իրավիճակին մէջ, որ յառաջդիմութեան ու յարատեւութեան ի խնդիր «բարձրացի՛ր» ու մանաւանդ «բարձրացո՛ւր»-ի հաւատքով կը շարունակէ անշեղօրէն ու հաւատարմօրէն իրագործել հայեցի դաստիարակութեան իրեն վստահուած կարելոր աշխատանքները սիրով ու նուիրումով:

«Հ.Ս.Ը.Մ.ը հայ կեանքին մէջ լաւատեսութեան երեւոյթ է»:

ՇԱՅԱՆ ԵՊՍ. ՍԱՐԳԻՍԵԱՆ

Եղբ. Յովհաննէս Արապաճեան ծնած է Հալէպ, 1928-ին: 13 տարեկանին կ'աւարտէ Ազգ. Կիւլպէնկեան վարժարանը: Աղքատութեան պատճառով չէ կարողացած շարունակել երկրորդական ուսումը: Հակառակ յառաջադէմ աշակերտ մը ըլլալուն, մուտք գործած է գործի ասպարէզ՝ դառնալով վաճառականի մը օգնական, ապահովելու իր ապրուստը:

1945-ին անդամակցած է Հ.Ս.Ը.Մ-ի շարքերուն, իբրեւ սկաուտ, իսկ եղբ. Յովհաննէս Խաչատուրեանի քաջալերան-



քով մաս կազմած է Հ.Ս.Ը.Մ-ի շեփորախումբին, իբրեւ շեփորահար եւ թմբկահար:

1954-ին, եղբ. Յովհաննէս ստանձնած է շեփորախումբի պատասխանատուութիւնը՝ մինչեւ 1965: Զանազան պատճառներով շեփորախումբը լուծուելէ ետք, լման կազմը փոխանցուած է սկաուտական շարքեր:

1979-ին ան մեծ դերակատարութիւն ունեցած է վերակազմելու շեփորախումբը, իրեն գործակից ունենալով եղբայրներ Խաչիկ Գաբրիէլեանը եւ Գօգօ Պատիկեանը, որոնք իբրեւ ուսուցիչ հրաւիրած են եղբայրներ Յակոբ Քէշիշեանը եւ Տիգրան Ժամկոչեանը: Յաջորդ տարին, Ս. Զատկուան տօնին առիթով, միջ-

մասնաճիւղային աւանդական տողանցքին, շեփորախումբը, իբրեւ յառաջատար, իր մասնակցութիւնը բերած է 170 քոյրերով եւ եղբայրներով:

1993-ին եղբ. Յովհաննէս արժանացած է Հ.Ս.Ը.Մ-ի «Մառաշութեան» շքանշանին:

1947-ին, «Քրիստափոր» Պատանեկան Միութեան անդամակցելով, ան հաւատարմօրէն ծառայած է իր շատ սիրած նուիրական գաղափարին: Անդամ է Համազգային Մշակութային Միութեան: Երկար տարիներ եղած է Բերիոյ Հայոց թեմի տնտեսական խորհուրդի անդամ: Ան յաճախ խորհուրդ կու տայ. «Միրեցէ՛ք ձեր միութիւնը եւ ընկերները՝ ձեր անձէն աւելի, որպէսզի կարենաք քաջօրէն օգտակար ըլլալ թէ՛ միութեան, թէ՛ հայրենիքին»:

Եղբ. Յովհաննէս սակաւախօս է: Ան իր յորդորներով երիտասարդ ուժերը կը մղէ միութենական աշխատանքի: Յատկանշուած է ղեկավարելու բացառիկ կարողութեամբ: Եղած է ծայրայեղ գաղտնապահ եւ խուսափած է ինքնագովութենէ:

Եղբ. Յովհաննէսին կը մաղթենք երկար, երջանիկ եւ առողջ կեանք:

www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org



ԵՒՐՈՊԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԵՐՈՒ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ՝

ՄՊԱՆԻԱ ԴԱՐՁԵԱԿ ԱԽՈՅԵԱՆ

Գ. Թորոյեան ՊԵՅՐՈՒԹ

Եւրոպայի ազգային խումբերու 2012-ի ախոյեանութիւնը սկսաւ 8 Յունիսին, Լեհաստան-Յունաստան մրցումով: Մինչեւ Յուլիս 1 ֆութպոլասէր հասարակութեան ուշադրութիւնը ուղղուած էր Լեհաստան եւ Ուքրանիա: 23 օրերու ընթացքին կատարուած մրցումները բաւական հետաքրքրական ու բարձր մակարդակի էին: Պէտք է նշել, որ մեծ անակնկալներ չարձանագրուեցան այս մրցաշարքին:

Ա. ՀԱՆԳՐՈՒԱՆԻ ՄՐՅՈՒՄՆԵՐԸ

Ա. խմբակի մրցումները սկսան կազմակերպիչ Լեհաստանի «ամչկոտ» քայլերով: Ռուսերը իրենց շունդալից յաղթանակով ազդարարեցին, թէ



կրնան մեծ անակնկալներ ստեղծել: Յաջորդ մրցումներուն անոնք հաւասարութիւն մը արձանագրելով լեհերուն հետ եւ պարտութիւն մը կրելով յոյներէն գլխիկոր հեռացան մրցաշարքէն: Չեխերը իրենց կրած առաջին պարտութենէն սթափելով, երկու մրցում յաղթելով, անցան Բ. հանգրուան: Կազմակերպիչ Լեհաստան երկու հաւասարութիւն եւ պարտութիւն մը արձանագրեց եւ ապացուցեց, թէ տակաւին հեռու է մեծերու հետ մրցելէ: Յոյները ստեղծեցին այս խմբակին անակնկալը, երբ ուսերուն յաղթելով անցան Բ. հանգրուան:

Բ. խմբակի մրցումներուն մեծագոյն պարտեալը եղաւ Հոլանտայի կազմը: Հոլանտացիք, որ կը նկատուէին տիտղոսին գլխաւոր թեկնածուներէն, երեք պարտութիւն կրելով, արձանագրեցին այս մրցաշարքի մասնակցութիւններու իրենց ամէնէն ձախող արդիւնքը: Դանիացիք Հոլանտային յաղթելով փորձեցին մրցիլ Գերմանիոյ հետ, սակայն Փորթուգալէն պարտուած վայքինկները պարտուեցան նաեւ գերմա-

նացին երեսնու մեկը: Փորթուգալ իր առաջին մրցումին դժուար պարտություն մը կրելով Գերմանիայէն, յաջորդ երկու մրցումներուն յաղթանակներ արձանագրեց եւ անցաւ Բ. Հանգրուան: Գերմանացիք եղան անսխալական: Անոնք եղան միակ կազմը, որ իրենց խմբակի բոլոր խաղերը յաղթանակով աւարտեցին:

Գ. խմբակին մէջ անակնկալներ չարձանագրուեցան: Ախոյեան Սպանիա դժուարութիւն չունեցաւ: Ան առաջին մրցումին հաւասարեցաւ վերանորոգուած Իտալիոյ հետ, ապա յաղթեց Ալիւրի եւ Խրուաթիոյ: Խրուաթները բաւական յամառ պայքար մղեցին մանաւանդ Իտալիոյ դէմ, որպէսզի կարենան խմբակին Բ. դիրքը գրաւել: Սակայն, իտալացիք եւ սպանացիք եղան անսխալ: Ալիւրի կազմը ներկայացուց «ծերացած» ֆուլթպոլ մը եւ երեք պարտություն կրելով հեռացաւ մրցաշարէն:

Դ. խմբակին մէջ ամէն ինչ ընթացաւ ի նպաստ Անգլիոյ եւ Ֆրանսայի: Կազմակերպիչ Ուլքրանիա փորձեց «բաներ մը ընել», սակայն չյաջողեցաւ: Առաջին մրցումին, Շուէտի դէմ յաղթանակը թեւեր տուաւ ուլքրանացիներուն, որոնք սակայն փորձառու անգլիացիներուն եւ ֆրանսացիներուն հանդիպելով պարտուեցան եւ դուրս մնացին մրցակցութենէն: Շուէտները բաւական գեղեցիկ ֆուլթպոլ ներկայացուցին, սակայն առաջին երկու մրցումները պարտուեցան եւ կանուխ հրաժեշտ տուին մրցաշարին: Անգլիացիք նոր մարզիչ Հոնսընի առաջնորդութեամբ բաւական լաւ խաղարկութիւն ցուցաբերեցին, մինչ մարզիչ Պլանի տղաքը անկայուն էին թէ՛ մակարդակով եւ թէ՛ արդիւնքներով:

Բ. ՀԱՆԳՐՈՒԱՆԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ

Բ. Հանգրուանի առաջին մրցումին Փորթուգալի կազմը, Քրիսթիանո Ռոնալտոյի առաջնորդութեամբ, համոզիչ յաղթանակ մը տարաւ չեխերուն դէմ: Երկրորդ մրցումին յոյները յամառ պայքար մղեցին եւ հաւասարութեան կողմ նշանակելէ ետք՝ պահ մը ստեղծուեցաւ այն տպաւորութիւնը, թէ անոնք պիտի իրագործեն 2004-ի իրենց յաջողութիւնը: Սակայն, գերմանացիք օգտագործեցին յոյներու պաշտպանողականին եւ բերդապահին սխալները եւ վերջ դրին անոնց «երազներուն»: Երրորդ մրցումին սպանացիք հանգիստ եւ ինքնավստահ յաղթանակ մը տարին «տարտղնուած» Ֆրանսայի կազմին դէմ: Իսկ Իտալիոյ կազմը անգլիացիներուն դէմ մրցեցաւ եւ միմիայն փենայթիներով կրցաւ կասեցնել ժեռարն ու ընկերները:



ԿԻՍԱԼԱՐՏԱԿԱՆ ԵՒ ԱԻԱՐՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ

Կիսաւարտականի առաջին մրցումին սպանացիք շատ դժուարութիւն ունեցան Փորթուգալի կազմին դիմաց: Այս մրցումը Սպանիոյ ամէնէն ձախող ելոյթն էր եւ փորթուգալցիք, մանաւանդ առաջին իննսուն վայրկեաններուն, աւելի մօտ էին յաղթանակին: Վճռորոշ եղան փենայթիները եւ սպանացիք յաղթեցին:

Երկրորդ մրցումը իրարու դէմ կը հանէր Եւրոպայի մնացուն մեծերը՝ Գերմանիան եւ Իտալիան: Գերմանացիք որ մինչ այդ անարգել հասած էին կիսաւարտական, «թարմացած» Իտալիոյ առջեւ գտան իրենք զիրենք ու առաջին կիսախաղին երկու կողմ ստանալով «կորսուեցան» դաշտին մէջ: Իտալացիք լաւագոյն կերպով անշարժացուցին Գերմանիոյ միջնապահ զիծը եւ օգտագործեցին պաշտպանողականին սխալները:

Աւարտականին, սպանացիք կը թուէին տիտղոսին աւելի լուրջ թեկնածուն ըլլալ: Մրցումին առաջին տասը վայրկեաններուն արդէն ակներեւ էր, որ սպանացիք յաղթական դուրս պիտի գան: Անոնց միջնապահ մարզիկները լաւագոյն ձեւով դեկավարեցին մրցումը եւ Տաւիտ Վիլայի ու Ալպայի նշանակած կողերը իտալացիներուն թափը կոտորեցին: Սակայն, ամէնէն մոլեռանդ սպանացի համակիրը նոյնիսկ չէր կրնար երեւակայել, որ կրնան նմանօրինակ արդիւնքով յաղթել Իտալիոյ Բ. կիսախաղին սկիզբը, Իտալիոյ մարզիչ Փրանտելլի կատարած հապճեպ եւ սխալ փոփոխութիւնները պատճառ դարձան, որ սպանացիք մեծ արդիւնքով յաղթական դուրս գան աւարտական այս մրցումէն:

ԹԻԻԵՐ ԵՒ ՏՈՒԵԱԼՆԵՐ

Եւրոպայի ախոյեանութեան մրցումներուն ընթացքին նշանակուեցան 76 կոլեր (միջին՝ 2.45 կոլ): 47 մարզիկներ նշանակեցին նշեալ կոլերը, որոնցմէ մէկը իր բերդէն ներս: Վեց մարզիկներ նշանակեցին երեքական կոլ, սակայն լաւագոյն կոլ-սքորը հռչակուեցաւ սպանացի Ֆեռնանտո Թորէս, իսկ մրցաշարի լաւագոյն մարզիկը ընտրուեցաւ սպանացի Անտրէաս Ինիեսթա: Առաւելագոյն թիւով կոլեր նշանակող կազմը եղաւ Սպանիա (12 կոլ): Իսկ նուազագոյն կոլ նշանակող կազմը եղաւ Ալիւր՝ 1 կոլ: Առաւելագոյն կոլեր ստացող կազմը եղաւ Ալիւր՝ 9 կոլ, իսկ նուազագոյն կոլեր ստացող կազմը՝ Սպանիա՝ 1 կոլ: Առաւելագոյն կոլերով մրցումը եղաւ Գերմանիա-Յունաստան՝ 4-2: Միայն երկու մրցումներ աւարտեցան սպիտակ հաւասարութեամբ: Ամենամեծ արդիւնքով յաղթանակ արձանագրող կազմը

եղաւ Սպանիա, Այիրի եւ Իտալիոյ դէմ, 4-0 արդիւնքով: Շնորհուած չորս փենալթիներէն նըշանակուեցան երեքը: Գերմանիա եւ Սպանիա արձանագրեցին չորս յաղթանակներ: Լեհաստան, Հոլանտա եւ Այիրո՛ւն մէկ յաղթանակ արձանագրեցին: Վերջին երկուքը իրենց երեք մրցումներն ալ աւարտեցին պարտութեամբ: Իտալիա արձանագրեց երեք հաւասարութիւն: Մարզիկներուն ցոյց տրուեցաւ 123 դեղին եւ երեք կարմիր քարտ: Առաւելագոյն դեղին քարտեր ստացող երկիրը եղաւ Իտալիա՝ 16 դեղին քարտ: Դանիա եւ Գերմանիա նուազագոյն դեղին քարտեր ստացողներն էին՝ 4-ական քարտ:



դոս): Թորէս եղաւ եւրոպացի առաջին մարզիկը, որ յաջորդական երկու աւարտականի կողմէն նըշանակէ: Սպանացիք նաեւ ամէնէն մեծ արդիւնքով յաղթանակը արձանագրեցին աւարտական մրցումի մը (4-0): Անոնք երկու մրցաշարքէ ի վեր կը մնան անպարտելի: Անոնք եղան նաեւ եւրոպական առաջին կազմը, որ Եւրոպայի եւ աշխարհի ախոյեանութեան տիրանալէ ետք, դարձեալ կը տիրանայ Եւրոպայի ախոյեանութեան:

ԱՆՈՅԵԱՆ ՍՊԱՆԻԱ

Մրցաշարքին առաջնութեան տիրանալով, Սպանիա հանդիսացաւ եւրոպական առաջին երկիրը, որ յիշեալ տիտղոսը կը շահի յաջորդաբար երկու անգամ: Այս յաղթանակով ան նաեւ հաւասարեցաւ Գերմանիոյ տիտղոսներուն (երեք տիտ-

րանալէ ետք, դարձեալ կը տիրանայ Եւրոպայի ախոյեանութեան:

Այս մրցաշարքի իրենց յաղթանակներով եւ խաղի մակարդակով սպանացիք ապացուցեցին, թէ կը մնան անգերազանցելի: Անոնց մարզիկներուն մեծամասնութիւնը մաս կազմելով Պարսայի եւ Ռէպլի կազմերուն, անոնք ներկայացուցին «Պարսայի» ֆուլթայլը: Աւարտական մրցումին ակնյայտ դարձաւ, որ անոնք կը մնան աշխարհի լաւագոյն կազմը եւ պատրաստ են երկու տարի յետոյ պաշտպանելու աշխարհի ախոյեանի իրենց տիտղոսը:



Elegance Plus

Shoes, Bags, Fashion Accessories & Gift Items

Bourj Hammoud - Dora - Armenia Street - Boyadjian Bldg.
Beirut - Lebanon
Tel. : 00961-1-248554, Fax : 00961-1-248556
Mob.: 00961-3-882811 - 00961-3-882812
E-mail: hratch@goldenmountains.com
hratchboy@hotmail.com

H. N. BOYADJIAN & CO.



Հ.Մ.Ը.Մ.Ի ԳԷՄՊՐԻՃԻ ՄԱՍՆԱՃԻՂԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 35-ԱՄԵԱԿԻ ՆՇՈՒՄ, ԳԱՆԱՏԱՅԻ ՇՐՋԱՆԻ 42-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐ ԵՒ ՄԱՅԻՍ 28-Ի ՀԱՆԴԻՍԱԽՈՐ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Յուրեր Սկրտիչեան ԳԷՄՊՐԻՃ

25 -27 Մայիսի շաբաթավերջը իր յատկանշական կնիքը ունեցաւ Գէմպրիճի հայ գաղութին եւ յատկապէս Հ.Մ.Ը.Մ-ի տեղւոյն մասնաճիւղին պատմութեան մէջ, երբ երեք օրուան ընթացքին շրջանին մէջ տեղի ունեցան նշանակալից երեք ձեռնարկներ. Գէմպրիճի մասնաճիւղի հիմնադրութեան 35-ամեակի նշում, Հ.Մ.Ը.Մ-ի Գանատայի շրջանի 42-րդ մարզախաղեր եւ Մայիս 28-ի հանդիսաւոր տօնակատարութիւն:

**42-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ
ԲԱՑՈՒՄԸ ԵՒ 35-ԱՄԵԱԿԻ
ՀԱՆԴԻՍԱԽՈՐ ՆՇՈՒՄԸ**
Ուրբաթ, 25 Մայիսին, Գէմպրիճի

հայ կեդրոնէն ներս տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի Գանատայի շրջանի 42-րդ մարզախաղերուն պաշտօնական բացումը, ներկայութեամբ պաշտօնական հիւրերու եւ բազմաթիւ հայորդիներու:

Երեկոյեան ժամը 8-ին, դրօշակակիրներու եւ սկաուտներու մուտքէն ետք, հնչեց «Յառաջ նահատակ» քայլերգը: Ապա, օրուան հանդիսավարին բարի գալուստի խօսքէն ետք, հրաւիրուե-



Հիւրեր հայ կեդրոնի շրջափակին մէջ կը հետեւին բացման հանդիսութեան:

ցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Գէմպրիճի մասնաճիւղի ատենապետուհի քոյր Լիոնի Սարմազեանը, որ ներկայացուց բացման հանդիսութեան իմաստը: Այնուհետեւ հրաւիրուեցան հանդիսութեան նախագահ եղբ. Ալեքօ Պէզիկեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան: Մասնաճիւղէն երկու մարզիկներ՝ եղբ. Սեպուհ կապաճուզեան եւ քոյր Դաւար Փօլատեան վազելով յառաջացան դէպի օրուան նախագահը եւ իրենց ձեռքի փոքր ջահը յանձնեցին անոր, որմով ան վառեց մեծ ջահը: Կրակի բոցավառման հետ, Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութեան ատենապետը պաշտօնապէս բացաւ յայտարարեց Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի շրջանի 42-րդ մարզախաղերը: Կատարուեցան մարզախաղերու մասնակից մարզիկի եւ իրաւարարի երդումները:



Գէմպրիճի մասնաճիւղի ատենապետուհի քոյր Լիոնի Սարմազեան:

Այնուհետեւ, Հ.Մ.Ը.Մ.ի Գէմպրիճի սկաուտական կազմին առաջնորդութեամբ, ներկաները յառաջացան դէպի հայ կեդրոնի սրահը, ուր տեղի ունեցաւ մասնաճիւղի հիմադրութեան 35-ամեակի պաշտօնական նշումը: Օրուան հանդիսավարն էր քոյր Յուլիա Մկրտիչեան:

Ջորդեգ տեսերիզի ցուցադրութիւն: Տեսերիզը կը ներկայացնէր յորելեար մասնաճիւղին 35 տարիներու մարզական, վարչական եւ սկաուտական հին ու նոր նկարները:

Բացման խօսքէն ետք, բեմ հրաւիրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Գէմպրիճի մասնաճիւղի ատենապետուհի քոյր Լիոնի Սարմազեան, որ փոխանցեց վարչութեան խօսքը: Ապա, բեմ բարձրացաւ Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային վարչութեան անդամ եղբ. Ժանօ Սարխանեան եւ իր կարգին փոխանցեց Շրջանային վարչութեան խօսքը: Յա-

Օրուան բանախօսն էր Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային վարչութեան նախկին ատենապետ եղբ. Մոսիկ Թոփուզեան: Բանախօսութենէն ետք, բեմ հրաւիրուեցան Համազգայինի «Գլաձոր» մասնաճիւղի «էրէբունի» պարախումբն ու Թամար Տօնապետեանը, որոնք ներկայացուցին հայրենաբոյր

պարերու եւ ասմունքի ծաղկաքաղ մը: Ապա, իր սրտի խօսքը փոխանցելու հրաւիրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան, որ յատուկ հրաւերով ժամանած էր Լիբանանէն՝ ներկայ գրտնուելու յիշեալ ձեռնարկներուն:

Եղբ. Մկրտիչեան իր խօսքին սկիզբը յայտնեց, որ «Հ.Մ.Ը.Մ.ի Գէմպրիճի մասնաճիւղը 35 տարեկան է: Ան պատանի չէ այլեւս տարիներու թիւով: Բայց միշտ պատանի կը մնայ իր աշխոյժ գործունէութեամբ, 170-է աւելի անդամներով, միշտ լաւին ու կատարեալին իր ձգտումով»:

Եղբայր Մկրտիչեան հարց տուաւ, թէ չկա՞ն Հ.Մ.Ը.Մ.ի Գէմպրիճի մասնաճիւղին նման մասնաճիւղեր: Ան շեշտեց. «Կա՛ն, նոյնիսկ աւելի հին ու բազմադամ մասնաճիւղեր: Սակայն, անոնք ծնունդը ըլլալով այլ գաղութներու, իրենց դերը կը կատարեն այլ միջավայրերու մէջ: Հ.Մ.Ը.Մ.ի Գէմպրիճի մասնաճիւղը հարազատ ծնունդը եւ զաւակը ըլլալով շրջանի հայութեան, վստահ ենք, որ իր 35-ամեակին, Գէմպրիճի հայութիւնը եւ, ինչու չէ, ամբողջ Գանատայի հայութիւնը հպարտ է իրմով»:

«Իսկ այս հպարտութիւնը պարտաւորեցնող է, - շարունակեց եղբ. Մկրտիչեան, - ան յաւելեալ պարտաւորութեան տակ կը դնէ մասնաճիւղին քոյրերն ու եղբայրները միշտ տալու իրենց լաւագոյնը եւ առաւելագոյնը՝ Հ.Մ.Ը.Մ.ի նպատակներուն իրականացման համար»:

Հետեւաբար, ան մաղթեց, որ՝ «Հ.Մ.Ը.Մ.ականի առողջ ոգին անպակաս ըլլայ մասնաճիւղի բոլոր անդամներուն մօտ, որպէսզի անոնք շարունակեն իրենց սիրելի միութեան ճամբով ծառայել գաղութին, հայրենիքին ու հայութեան, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.ական ըլլալու նախապայմանն է այդ»:

Հանդիսութիւնը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով, որմէ ետք պաշտօնական հիւրերու կողմէ կտրուեցաւ մասնաճիւղի 35-ամեակի կարկանդակը:


Տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

ՄԱՐԶԱՆԱՂԵՐՈՒՆ ԸՆԹԱՅՔԸ ԵՒ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

Բացման հանդիսութենէն օր մը ետք,



Գէմպրիճի մասնաճիւղի սկաուտներ «պատուի առ» կը կատարեն քայլերգներու ունկնդրութեան ժամանակ:



Համագրայինի «Գլաձոր» մասնաձիղի «Էրեբունի» պարախումբը կը ծաղկեցնէ 35-ամեակի հանդիսութեան գեղարուեստական յայտագիրը:

Հ.Մ.Ը.Մ-ի Գանատայի շրջանի 42-րդ մարզախաղերը ընթացք առին Շարաթ, 26 Մայիսին, «Core Lifestyle and Recreation Complex» մարզադաշտէն ներս, մասնակցութեամբ 18 խումբերու եւ շուրջ 200 մարզիկներու, որոնք եկած էին Գանատայի, Արեւմտեան եւ Արեւելեան Ամերիկաներու եօթը տարբեր շրջաններէ. Օրէյնճ Բաունթի, Տիթ-րոյթ, Լաւալ, Մոնթրէալ, Հեմիլթըն,

Թորոնթօ եւ Գէմպրիճ: Օտար մարզադաշտէն ներս, ամբողջ օրուան տեւողութեան ընթացքին կը հնչէին հայերէն բացազանչութիւններ:

Մարզախաղերու արդիւնքները պարզեցին հետեւեալ պատկերը.-

● ՖՈՒԹՊՈԼ

Աղջիկներ- առաջին՝ Թորոնթօ, երկրորդ՝ Գէմպրիճ:

Երէջ տղաք- առաջին՝ Թորոնթօ, երկրորդ՝ Տիթրոյթ:

Վեթերաններ- առաջին՝ Գէմպրիճ, երկրորդ՝ Մոնթրէալ:

14 տարեկան եւ վար- առաջին՝ Թորոնթօ, երկրորդ՝ Մոնթրէալ:

12 տարեկան եւ վար- առաջին՝ Գէմպրիճ, երկրորդ՝ Մոնթրէալ:

● ՊԱՍԷԹՊՈԼ

Կրտսեր տղաք- առաջին՝ Գէմպրիճ, երկրորդ՝ Թորոնթօ:

Երէջ տղաք- առաջին՝ Թորոնթօ, երկրորդ՝ Գէմպրիճ:


ՅԱՂԹԱՆԱԿԻ ՊԱՐԱՀԱՆԴԵՍԸ

Նոյն օրը, երեկոյեան, տեղի ունեցաւ մարզախաղերու յաղթանակի պարահանդէսը, որուն ներկայ գտնուեցան 500 Հ.Մ.Ը.Մ-ականներ եւ Հ.Մ.Ը.Մ-ի համակիրներ: Պարահանդէսին հանդիսավարն էր քոյր Արփա Ճապրայեան:

Հանդիսավարը իր բարի գալուստի խօսքէն ետք բնմ



Յոբելեար մասնաձիղի 35-ամեակի կարկանդակին շուրջ:



Քոյր Յուլեր Սկրտիչեան, մասնաճիւղի ատենապետուհի քոյր Լիոնի Սարմազեան, Գանատայի Շրջ. Վարչութեան անդամ եղբ. Ժանօ Սարխանեան եւ օրուան պատգամաբեր եղբ. Մոսիկ Թոփուզեան:

հրաւիրեց Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Սամսոն Քահքէճեանը, որպէսզի Հ.Մ.Ը.Մ.ի «Ծառայութեան» շքանշանի տուչութիւն կատարէ Գէմպրիճի մասնաճիւղէն վաստակաւոր ինը եղբայրներու: Եղբայր Քահքէճեան շքանշանի արժանացողներուն կենսագրական գիծերը ներկայացնելէ ետք, բեմ հրաւիրեց Գանատայի Շրջանային Վարչութեան ան-

դամ եղբայրներ Ժանօ Սարխանեանը եւ Հրաչ Նաճարեանը, որպէսզի միասնաբար կատարեն տուչութիւնը:

Այս առիթով, Հ.Մ.Ը.Մ.ի «Ծառայութեան» շքանշանի արժանացան Գէմպրիճի մասնաճիւղէն եղբայրներ Գառնիկ Պալճեան, Նուպար Սաղտրճեան, Խաժակ Պօղոսեան, Ծերոն Թիթիգեան, Զարեհ Սարմազեան, Հայկազ Թիթիգեան, Յակոբ Մինասեան, Խորէն Մուրատեան եւ Պօղոս Մուրատեան:

Ապա, խօսք առաւ, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Արմէն Կէտիկեան, որմէ ետք բեմ բարձրացաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան եւ միութեան բարձրագոյն «Արժանեաց» շքանշանով պարգեւատրեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Հրաչ Տէր Սարգիսեանը: Այնուհետեւ, բեմ բարձրացան երգիչներ Խորէն Մուրատեան եւ Արարատ Ահարոնեան, որոնք մինչեւ առաւօտեան կանուխ ժամեր ստեղծեցին մեծ խանդավառութիւն:

Հայաստանի Ա. Հանրապետութեան 94-ամեակի տօնակատարութիւն եւ Գանատայի շրջանի 42-րդ մարզախաղերու փակման պաշտօնական հանդիսութիւն, հովանաւորութեամբ Հ.Յ.Դ. «Արամ-Դրօ» կոմիտէին եւ կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Գէմպրիճի մասնաճիւղի վարչութեան: Տօնակատարութեան ներկայ գտնուեցան շրջանի հոգեւոր հովիւները՝ Կոմիտաս Ա. Քհնյ. Փանոսեան եւ վերապատուելի Յովհաննէս Սարմազեան, կառավարական բարձրաստիճան պաշտօնատարներ՝ Հարոլտ Ալպրէխթ (Հայաստան-Գանատա խորհրդարանական բարեկամութեան խրմբակցութեան նախագահ), Կէրի Կոլտյիր (Գանատայի գիտութեան նախարար), Մայքըլ Հէրիս (Օնթարիոյ խորհրդարանի անդամ), Սթիվըն Ուտուրթ (խորհրդարանի պահպանողական կուսակցութեան անդամ), ոստիկանապետ Մէթ Թորիկեան, հանդիսութիւններու նախագահ եղբ. Ալեքօ Պէգիկեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան, Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Արմէն Կէտիկեան, Հ.Յ.Դ. Գանատայի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Րաֆֆի Տօնապետեան, Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութեան ան-



Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետը կը փոխանցէ իր սրտի խօսքը:

ՄԱՅԻՍ 28-Ի
ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ
ԵՒ ՄԱՐԶԱՆԱՂԵՐՈՒ ՓԱԿՈՒՄ
 Կիրակի, 27 Մայիսին, տեղի ունեցաւ



«Ծառայութեան» շքանշանի արժանացած մասնաճիւղի ինը եղբայրները:



Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Արմէն Կէտիկեան եղբ. Զրաչ Տէր Սարգիսեանին կը յանձնէ «Արժանեաց» շքանշանի վկայագիրը:

ղամներ, պատկան մարմիններու եւ միութիւններու ներկայացուցիչներ ու ազգայիններ:

Տօնակատարութիւնը սկսաւ Հ.Մ.-Ը.Մ.ի Թորոնթոյի մասնաճիւղի շեփորախումբին մուտքով, որուն յաջորդեց Հ.Մ.Ը.Մ.ի Գէմպրիճի եւ Թորոնթոյի սկաուտներուն տողանցքը, ապա՝ մար-

զիկներուն մուտքը: Օրուան հանդիսավարներն էին քոյր Յոլեր Մկրտիչեան եւ եղբ. Սարո Սարմազեան:

Բարի գալուստի խօսքէն ետք, բեմ բարձրացաւ Հ.Մ.Ը.Մ.ի Գէմպրիճի մասնաճիւղի ատենապետուհին եւ փոխանցեց մասնաճիւղի վարչութեան խօսքը: Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային

Վարչութեան խօսքը փոխանցեց եղբ. Սամսոն Քահքէճեան: Ապա, բեմ հրաւիրուեցաւ «Սասուն» պարախումբը, որ հայաշունչ պարերով ստեղծեց ազգային խանդավառ մթնոլորտ:

Օրուան պատգամբերն էր Հ.Մ.-Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան:

ՊԱՐԳԵՒԱՏՐԵԱԼԸ՝

ԵՂԲ. ԶՐԱՉ ՏԵՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ


Եղբ. Զրաչ Տէր Սարգիսեան ծնած է 1941-ին, Գահիրէ: Նախնական կրթութիւնը ստացած է Աղեքսանդրիոյ Մխիթարեան եւ Պօղոսեան վարժարաններուն մէջ: 1960-1964 ան յաճախած է Լիզպոնի մարմնակրթական հիմնարկը, զոր աւարտած է Պաքալորէայի վկայականով: Այնուհետեւ ան հաստատուած է Մոնթրէալ, ուր 1976-ին Մագիստրոսի աստիճանով վկայուած է Մըքկիլի համալսարանէն:

Եղբ. Զրաչ Հ.Մ.Ը.Մ.ին անդամակցած է ութ տարեկանին, իբրեւ Աղեքսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ.-«Կամբ»ի գայլիկ, պասքէթպոլի մարզիկ եւ աթլէթ: Գանատայի մէջ, ան աւելի քան երեք տասնամեակ ստանձնած է վարչական եւ մարզական զանազան պատասխանատուութիւններ: 1989-ին, ան տարուան գերագանց տնօրէնի տիտղոսով պարգեւատրուած է Association Regionale de Soccer Concordia-ի կողմէ: Տարի մը ետք, արժանացած է Հ.Մ.Ը.Մ.ի Ծառայութեան շքանշանին: 1999-2007, երկու քառամեակ ան եղած է Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ: Նոյն միջոցին, պատասխանատու այլ եղբայրներու հետ,

ան Հ.Մ.Ը.Մ.ը ներկայացուցած է համապատասխան խաղերու գործադիր կոմիտէին մօտ: Այժմ, նոյն կոմիտէի պատուար անդամ է ան: Դեկտեմբեր 2011-ին, առ ի գնահատանք կոմիտէին իր մատուցած ծառայութիւններուն, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան անոր շնորհեց հայկական քաղաքացիութեան անձնագիր:

1964-էն ի վեր, եղբ. Զրաչ գործօն անդամ է Մոնթրէալի Կաթողիկէ Վարժարաններու Յանձնաժողովին (Commission des Ecoles Catholique de Montreal): Իբրեւ մարմնակրթանքի հմուտ մասնագետ, ան հիմնադիրն է Մոնթրէալի եւ շրջակայքի դպրոցական մարմնամարզի շարք մը ընկերակցութիւններու:

Ամուսնացած է եւ ունի դուստր մը՝ Գարէն եւ մանչ մը՝ Շանթ:





Փակման հանդիսության իր խօսքը կը փոխանցէ մարզախաղերու նախագահ եղբ. Ալեքօ Պեգիկեան:



Եղբայր Մկրտիչեանի պատգամէն ետք, բեմ հրաւիրուեցաւ հանդիսութիւններու նախագահ եղբ. Ալեքօ Պեգիկեան եւ մեծ յուզումով իր սրտի խօսքը ուղղեց երիտասարդ սերունդին, թելադրելով որ հպարտութեամբ կառչած մնան իրենց արմատներուն:

Տօնակատարութեան ընթացքին, մերթ ընդ մերթ, կատարուեցաւ բաժակներու եւ մետալներու յանձնում: Տեղի ունեցաւ նաեւ յուշանուէրներու փոխանակում: Հ.Մ.Ը.Մ.ի Գէմպրիճի մասնաճիւղէն երկու մարզիկներ՝ եղբայրներ Սեպուհ Կապանուզեան եւ եղբ. Շահէ Փօլատեան ջահը իրենց ձեռքին՝ վազելով յառաջացան ու մառեցին Գանատայի շրջանի 42-րդ մարզախաղերուն ջահը:

Տօնակատարութիւնը իր աւարտին


հասաւ «Սարգարապատ» յաղթերգով:

Երեք օրուան ընթացքին կատարած ձեռնարկները արդիւնքն էին յանձ-


նախումբերու եւ վարչական անդամներու մէկ տարուան հետեւողական ու բժախնդիր աշխատանքին: Ձեռնարկնե-



Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութեան խօսքը կը փոխանցէ եղբ. Սամսոն Բաիքեճեան:



եղբ. Գառնիկ Մկրտիչեան եռագոյն երիզով կը պատուէ եղբ. Ալեքօ Պեգիկեանը:



Պաշտօնական հիւրեր կը հետեւին քայլերգներու կատարումին:



ՃԱՆՉՆԱՆՔ

ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ՆԱԽԱԳԱՀ ԵՂԲ. ԱԼԵՔՕ ՊԷՉԻԿԵԱՆ

Եղբ. Ալեքո Պեչիկեան 1959-ին եղած է Հ.Մ.-Ը.Մ.ի Պէյրուսի աթլեթիզմի խումբի 400 մ. վազքի լաւագոյն մարզիկը: Ան Լիբանանը ներկայացուցած է 1962-ի միջերկրականեան խաղերուն (Փահիրէ) եւ հանդիսացած է երկրորդ:

1964-ին եղբ. Ալեքո դարձած է Հ.Մ.Ը.Մ.ի աթլեթիզմի խումբի մարզիչ եւ երկու տարի ետք խումբը հասցուցած է Լիբանանի առաջնութեան տիտղոսին՝ արժանանալով 9 ոսկի, 6 արծաթ եւ 4 պրոնզ մետալներու:

1967-ին, եղբայրներ Վարդգէս եսկիպաշեանի եւ Վարուժան Մուրատեանի հետ ան կը հանդիսանայ ԼԵՎԱՄ-ի հիմնադիրներէն:

Երկու շրջան եղբ. Ալեքո եղած է Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրուսի մասնաճիւղի վարչութեան անդամ՝ քարտուղարի պաշտօնով: Ան իր օժանդակութիւնը բերած է միութեան հեծելարշաւի, պասքեթպոլի խումբերուն եւ ֆութպոլի դաշտերու պատասխանատու յանձնախումբին:

Եղբ. Ալեքո 1983-ին հիմնած է Հ.Մ.Ը.Մ.ի Միլանոյի մասնաճիւղը, որ գործած է մինչեւ 1991: Այնուհետեւ, ան իր ամբողջ ժամանակը տրամադրած է Հայ Դատի Եւրոպայի Պրիւքսէլի գրասենեակին:

Կանուխ տարիքէն Հ.Մ.Ը.Մ.ական ըլլալու կողքին, եղբ. Ալեքո 16 տարեկանէն մաս կազմած Պէյրուսի Հ.Յ.Դ. «Բաբգէն Սիւնի» Պատանեկան Միութեան, իբրեւ դաստիարակ ունենալով Սիմոն Վրացեանը: Միլանօ իր կեցութեան շրջանին, երեք նստաշրջան ան եղած է Հ.Յ.Դ. Եւրոպայի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ, ապա դարձած է հիմնադիր անդամ Եւրոպայի Հայ Դատի գրասենեակի, տեւական կապեր

մշակելով Եւրոխորհրդարանի պատասխանատու դէմքերու հետ:

1995-էն ի վեր, եղբ. Ալեքո Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ներկայացուցիչը եղած է Վատիկանի իշխանութիւններուն մօտ: Ան բուռն պաշտպաններէն կը հանդիսանայ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դարաւոր Աթոռին առաքելութեան եւ դերակատարութեան:

Վեց տարի եղած է Իտալիոյ Հայոց Միութեան ընդհանուր քարտուղարը, սերտ կապեր հաստատելով Իտալիոյ խորհրդարանի անդամներու հետ: Տարած է քաղաքական մեծ աշխատանք՝ խորհրդարանին կողմէ Հայկական Ցեղասպանութեան ճանաչման համար:

1988-ի երկրաշարժէն ետք, ան մեծ օժանդակութիւն ցուցաբերած է Սպիտակ քաղաքի որբերուն: Շինած է երաժշտանոց մը եւ տարիներ շարունակ հոգացած է 350 որբերու կարիքները, 42-ը հասցնելով համալսանական ուսման: Տարիներու ընթացքին անոր օժանդակութիւններուն գումարը հասած է 5 միլիոն տոլարի:

Եղբ. Ալեքո կը տիրապետէ եօթը լեզուներու: Ան ամուսնացած է Անի Գուտուլեանի հետ եւ բախտաւորուած է երկու մանչ զաւակով՝ Չարեհ եւ Արամ:

Այժմ ան կ'ապրի Չուիցերիա:



Փակման հանդիսութեան ներկայ պատասխանատուներու յիշատակի նկար:



րը ունեցան մեծ յաջողութիւն: Նկատելի էր բոլոր ձեռնարկներուն օրինաւորութիւնն ու կազմակերպուածութիւնը: Հ.Մ.Ը.Մ.ի Գէմպրիճի մասնաճիւղը ո՛չ միայն վառեց Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի 42-րդ մարզախաղերուն ջահը, այլեւ՝ անոր ընդմէջէն իր շողերը արձակեց Գէմպրիճի հայ կեդրոնէն ներս, բարձրանալով ու իր հետ բարձրացնելով նախ Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքը ու ապա՝ Հ.Մ.Ը.Մ.ով հպարտ Գէմպրիճի հայութիւնը:



Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱՄԱՆԳԻ ՄԱՍՆԱՃԻԻՂԻՆ ՄԿԱՌԻՏԱԿԱՆ «ԽԱՂԻ ՕՐ»ԵՐԸ



Թղթակից ՀԱԼԷՊ

Դպրոցական տարեշրջանի աւարտին, դասերու եւ քննութիւններու պարտաւորութիւններէն հազիւ թեթեւցած, Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի մասնաճիւղի «Շաւարշ Քրիսեան» միաւորի գալլիկներն ու արծուիկները, Կիրակի, 10 Յունիսին, Հ.Մ.Ը.Մ.ի պարտէզին մէջ ունեցան իրենց «խաղի օր»ը, մասնակցութեամբ 204 քոյր-եղբայրներու:

«Խաղի օր»ուան յայտագիրը սկիզբ առաւ գալլիկական «Մեծ կանչ»ով: Ապա, ներկաները բաժնուեցան խմբակներու: Իւրաքանչիւր խմբակի տրուեցաւ անուն մը՝ մոկլիի աշխարհէն:

Յաջորդեց մարզանքը՝ արդիական միջոցներով: Արդէն բոլորը անօթեցած անհամբեր կը սպասէին նախաճաշը: Իւրաքանչիւր խմբակ օղակ մը կազմելով նախաճաշեց պանիր եւ օշարակ: Նախաճաշէն ետք, «Կարմիր», «Կապոյտ», «Նարնջագոյն» խմբակներու եղբայրները ունեցան Փուլթպոլի իրենց մրցաշարքը, մինչ քոյրերը կատարեցին դաշտային զանազան խաղեր: «Ճերմակ», «Կանաչ» եւ «Դեղին» խմբակները, իրենց կարգին, կատարեցին դաշտային եւ ջուրի խաղեր:

Բաւական յոգնութենէ ետք, խմբակները հաւաքուեցան միասնաբար կատարելու խրախճանք, ուր մեծ խանդավառութեամբ երգեցին ազգային-յեղափոխական երգեր ու կանչեր:

Խրախճանքէն ետք, երէց գալլիկ-

ներն ու արծուիկները կատարեցին ռալիի խաղեր, իսկ կրտսեր քոյրերն ու եղբայրները դիտեցին իրենց համար պատրաստուած տիկնիկային թատրոնը:

Երբ հասաւ օրուան աւարտը, բոլոր վոճմակներն ու երամները կրկին հաւաքուեցան եւ կատարեցին դրօշակի արարողութիւն: Գործունէութիւնը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:

Շաբաթ մը ետք, Հ.Մ.Ը.Մ.ի մարզականին մէջ իրենց «խաղի օր»ը ունեցան մասնաճիւղին «Գրիգոր Յակոբեան» արի եւ արենոյ միաւորները, ներկայութեամբ 85 քոյրերու եւ եղբայրներու: Անոնք իրենց մասնակցութիւնը բերին տասնմէկ տարբեր խաղերու, որոնք բաժնուած էին տաղաւարներու դրութեամբ: Միաւորները բաժնուեցան վեց խմբակի: Իւրաքանչիւրը յատկանշուեցաւ գոյնով մը, իսկ խաղերը եղան ջուրերով: Կիրարկուեցան սկաուտական դաշտային խաղեր:

Սկաուտներ երկու տարիէ տեղի չունեցող բանակումներու մթնոլորտին կարօտը զգալով՝ մեծ խանդավառութիւն ստեղծեցին մարզաւանէն ներս եւ սկաուտական կանչերով ու երգերով աւարտեցին օրուան իւրապատուկ գործունէութիւնը:

«Խաղի օր»երուն մասնակից գալլիկ-արծուիկներ:





Հ.Մ.Ը.Մ.Ի ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ 67-ՐԴ ԺՈՂՈՎԸ

Թղթակից ԱԹԵՆՔ

Հ.Մ.Ը.Մ.Ի Յունաստանի Շրջանային Ներկայացուցչական 67-րդ ժողովը տեղի ունեցավ Կիրակի, 10 Յունիս 2012-ին, Ֆիքսի «Աւետիքեան» սրահէն ներս, ի ներկայութեան մօտ քառասուն քոյր-եղբայրներու եւ հրաւիրեալներու:

Ժողովին կը մասնակցէր յատկապէս Լիբանանէն ժամանած, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբայր Գառնիկ Մկրտիչեան: Ներկայ էին Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի պատուոյ նախագահ եղբ. Կարպիս Գուլումճեան, Շրջանային Վարչութեան, Աթէնքի եւ Գոքինիոյ մասնաճիւղերու պատգամաւորներ, Սկառուտական Խորհուրդի պատասխանատուներ, 16 օրինաւոր եւ 6 խորհրդակցական ձայնով ներկաներ, ինչպէս նաեւ հրաւիրեալներ: Կը բացակայէր Սելանիկի մասնաճիւղը: Ներկայ էին նաեւ Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի անդամներ Գէորգ Գոլանեան եւ Նազարէթ Պէրպէրեան:

Ժողովը իր ներկայութեամբ պատեց Յունահայոց Առաջնորդ Խորհի Եպս. Տողրամաճեան, որ ժողովականներուն միացաւ կէսօրուան ժամերուն:

Ժողովին մասնակցեցան նաեւ հրաւիրեալներ՝ Յունահայոց Ազգային Վարչութեան կողմէ Ստեփան Փափագեան, Հ.Կ.Խաչի Շրջանային Վարչութեան կողմէ Մերի Ծերոնեան, Համազգայինի Շրջանային Վարչութեան կողմէ Սերգօ Մինասեան եւ Յովհաննէս Գայթանճեան, Հ.Յ.Դ. Երիտասարդական Միու-



թեան Կեդրոնական Վարչութեան կողմէ Մատլէն Պալատեան եւ «Ազատ Օր»ի կողմէ Հռիփսիմէ Յարութիւնեան: Հրաւիրեալները ողջոյնի խօսքերով հանդէս եկան եւ շնորհաւորելով Հ.Մ.Ը.Մ.ի շրջանի գերագոյն ժողովին գումարումը՝ արդիւնաւէտ աշխատանք մաղթեցին ժողովին եւ իրենց զօրակցութիւնը հաստատեցին քոյր միութեան աշխատանքներուն:

Ժողովը բացուած յայտարարեց ատժամեայ դիւանի նախագահ եղբ. Պաղտիկ Գարապաճաքեան, որ խնդրեց մէկ վայրկեան յոտնկայս լռութեամբ յարգել Հ.Մ.Ը.Մ.ի մահացած քոյր-եղբայրներու յիշատակը: Ապա, ժողովը ընտրեց իր մնայուն դիւանը՝ ատենապետութեամբ եղբ. Պաղտիկ Գարապաճաքեանի եւ ատենադպրութեամբ քոյր Մարլէն Տազէսեանի:

Լիազօրագիրներու ստուգումը կատարելէ ետք՝ յստակացաւ ժողովին օրինաւորութիւնը, որմէ ետք տեղի ունեցաւ բանաձեւի, հաշուեքննիչ եւ արխիւային յանձնախումբերու կազմութիւնը:

Բանաձեւի յանձնախումբի անդամներ ընտրուեցան եղբայրներ Յարութիւն Մանուկեան, Արամ Սպարթալեան եւ Վարանդ Մկրտիչեան:

Հաշուեքննիչ յանձնախումբի անդամներ ընտրուեցան քոյր Սոֆիա Միքայէլեան, եղբայրներ Կարպիս Ճանիկեան եւ Սերգօ Էրջէնեան:

Արխիւային յանձնախումբի անդամներ ընտրուեցան քոյրեր Ակնէս Թոքաթլեան եւ Ռիթա Յակոբեան:

ԸՆԹԱՑԱԻԱՐՏ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Առաջին հերթին, ամփոփ գեկոյցներով հանդէս եկան Հ.Մ.Ը.Մ.ի Գոքինիոյ եւ Ֆիքսի մասնաճիւղերու վարչութիւններու ատենապետները, ներկայացնելով իրենց միաւորներու թուային պատկերը, մարզական խումբերուն գործունէութիւնը եւ ձեռնարկներու պատկերը:

Այնուհետեւ, ընթացաւ արտ Շրջանային Վարչութեան ատենադպիր եղբ. Յակոբ Յովակիմեան ընթերցեց երկամեայ գործունէութեան տեղեկագիրը, ուրկէ ի յայտ եկաւ, որ Շրջանային

Վարչութիւնը գործած է հնգանդամ կազմով՝ ատենապետ եղբ. Յարութիւն Խաչատուրեան, փոխ ատենապետ եղբ. Յովհաննէս Ղազարեան, ատենադպիր քոյր Մարլէն Տազսեան, գանձապահ եղբ. Ազարիկ Եորղանճեան, խորհրդական եղբ. Յակոբ Պետոյեան: Քոյր Մարլէն Տազսեանի եւ եղբ. Յակոբ Պետոյեանի հրաժարականներէն ետք, մարմինը համալրուած է եղբ. Սերգօ Արապեանով եւ Ազարիկ Եորղանճեանով: 2011-ի Սեպտեմբերէն ետք, Շրջանային Վարչութեան գործավար-քարտուղարի պաշտօնը ստանձնած է քոյր Արփի Փափագեանը:

Շրջանը կը գործէ երեք մասնաճիւղերով՝ Աթէնքի, Գոքինիոյ եւ Սելանիկի մէջ:

Մասնաճիւղերը ունին պասքեթպոլի, լողի, ճատրակի, վոլիպոլի, ֆութպոլի երէցներու եւ կրտսերներու բաժիններ: Սելանիկի մասնաճիւղը կը կիրարկէ փինկ-փոնկի մարզաձեւ: Անցնող երկամեակին սկսած է գործել նաեւ շարժանիւ (մոթորսայքը) վարողներու նորակազմ խումբը, որ կազմակերպած է կարգ մը արշաւներ:

Ընդհանուր աշխատանքներու ծիրէն ներս, կազմակերպուած են գաթայի կտրումներ, միջ-վարչական ժողովներ եւ այլ ձեռնարկներ: Մասնաճիւղերը լայն աշխատանք տարած են մարզական մրցումներու կազմակերպումով, արշաւներու եւ ձեռնարկներու իրագործումով:

Շրջանը մէկ ներկայացուցիչով իր մասնակցութիւն բերած է Հ.Մ.Ը.Մ-ի Պատգամաւորական 10-րդ Ընդհանուր Ժողովին:

Ապրիլ 2011-ին, ժընեւի մէջ կազմակերպուած հայկական միջ-եւրոպական խաղերուն, շրջանը մասնակցած է 26 հոգինոց պատուիրակութեամբ մը:

2011-ի ամրան, «Սփեսիալ Օլիմփիքս» մրցումներուն, Յունաստան այցելած է Հայաստանէն պատուիրակութիւն մը: Այդ առիթով, պատուիրակութեան անդամները հիւրասիրուած են նոյն օրերուն տեղի ունեցող ռալի-բանակումին:

Երրորդ անգամ ըլլալով, յաջողութեամբ կազմակերպուած են Մայիսեան յաղթանակի խաղերը, Նիքէայի «Փրոո-

տելթիքի» դաշտին մէջ, պատանիներու եւ վեթերաններու ֆութպոլի մրցումներով եւ սկաուտական տողանցքով:

ՍԿԱՌԻՏ-ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Ընթացաւարտ Սկաուտ- Խորհուրդին տեղեկագիրը ընթերցեց եղբ. Յարութիւն Մանուկեան: Տեղեկագիրէն ի յայտ եկաւ, որ անցնող երկու տարիներուն, Խորհուրդը գործած է հետեւեալ կազմով.- ատենապետ եղբ. Յարութիւն Մանուկեան, քարտուղարուհի քոյր Թամար Մինասեան, գանձապահ եղբ. Խաչիկ Մինասեան, խորհրդականներ քոյր Գոհար Ալիանաքեան, եղբայրներ Յովիկ Ապրոյեան, Ազարիկ Եորղանճեան եւ Գէորգ Պօղոսեան: Քոյր Թամար Մինասեանի հրաժարումով եւ եղբ. Ազարիկ Եորղանճեանի Շրջանային Վարչութեան անդամ նշանակումով, Սկաուտ- Խորհուրդի կազմին մէջ ներառուած է եղբ. Ֆէտի Թափրա, որ գործած մինչեւ 2011-ի վերջաւորութիւնը, երբ ընտանեօք փոխադրուած է Լիբանան:

Յունաստանի շրջանին մէջ կը գործեն սկաուտական երկու միաւորներ՝ Աթէնքի եւ Գոքինիոյ մէջ, 207 հոգիի մասնակցութեամբ, սկաուտ-արենոյշ, երէց-պարմանուհի աստիճանաւոր, գայլիկ-արծուիկ-մոկլի, թմբկահարներով եւ սկաուտական երկու խորհուրդներով:

2010-ին եւ 2011-ին կազմակերպուած են միջ-մասնաճիւղային բանակումներ: Շրջանը իր մասնակցութիւնը բերած է Բիւրականի մէջ Օգոստոս 2010-ին կազմակերպուած համա-Հ.Մ.Ը.Մ-ական 9-րդ բանակումին, իննանդամ պատուիրակութեամբ մը եւ Շրջանային խմբապետուհի քոյր Գոհար Ալիանաքեանի առաջնորդութեամբ:

Կազմակերպչական մարզէն ներս, Սկաուտ- Խորհուրդը շարունակած է գործադրել Վկայեալ կարգի դասընթացքներ:

ՕՐԱԿԱՐԳԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Տեղեկագիրներու ընթերցումէն ետք, ժողովը յաջորդաբար քննեց կազմակերպչական՝ վարչական, սկաուտական ու մարզական բաժիններ, ինչպէս

նաեւ դաստիարակչական ու նոր աշխատանքներու ծրագրումներու հարցեր:

Կազմակերպչական գլուխին տակ նկատի առնուեցաւ կառոյցի հզօրացման եւ ընդլայնման հարցը: Օգտակար գտնուեցաւ կայքէջի եւ «Ֆէյսպուք»-ի ելեկտրոնային կարելիութիւններու օգտագործումը:

Քննարկումներու շարքին ժողովը կարեւորութեամբ անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ-ի արխիւային նիւթերու եւ իրերու համախմբումի անհրաժեշտութեան, անոնց լրիւ ցանկագրումին եւ ըստ կարելիութեան՝ թանգարային օգտագործումի հնարաւորութիւններուն:

Պատգամաւորներու ելոյթներուն մէջ զգալի էր տնտեսական ճգնաժամին ստեղծած մտահոգութիւնը, նոյն պահուն սակայն վճռակամութիւն կ'արտայայտուէր զարթօնքի առաջնորդող տրամադրութիւններ ստեղծելու եւ բոլորը քով-քովի գալով՝ գաղութին եւ միութեան աշխուժութիւնը վերականգնելու: Ժողովականները շեշտեցին, թէ պահանջը կը զգացուի նոր առաջադրանքներու ճշդումին, որպէսզի միութիւնը կազմակերպուած քայլերով յառաջանայ իր նոր երկամեակին:

ՆՈՐ ԿԱԶՄԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Ժողովի աւարտին տեղի ունեցաւ Շրջանային Վարչութեան նոր կազմի ընտրութիւն:

Ընտրուեցաւ հնգանդամ կազմ, բաղկացած հետեւեալ քոյր-եղբայրներէն.- Վարանդ Մկրտիչեան, Յարութիւն Եգեկիէլեան, Ազարիկ Եորղանճեան, Յակոբ Յովակիմեան եւ Մարլէն Տազսեան:

Շրջանային ներկայացուցչական 67-րդ ժողովը փակուեցաւ աշխոյժ նըստաշրջան մը բոլորելու մաղթանքներով եւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչին կողմէ արտայայտուած բաղձանքով՝ համահայկական ծրագիրներուն Յունաստանի միաւորներու լայն մասնակցութեան ակնկալութեամբ:

Ժողովը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերով:



«ՇԱԼԱԿԱՍ 100՝ ԵՐԱԶՍ ԱՆՎԵՐՁ»

Հ.Մ.Ը.Մ.Ի ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՄԻՋ-ՄԱՄՆԱՃԻՒՂԱՅԻՆ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ 11-ՐԴ ԲԱՆԱԿՈՒՄԸ



Լոռի Պարագեան ԱԹԵՆՔ

Այս տարի, համաշխարհային մակարդակով կը նշենք հայ սկաուտութեան հիմնադրութեան 100-ամեակը:

Հայ սկաուտներ 1912-էն ի վեր գոյութիւն ունին մեր կեանքին մէջ: Հայ սկաուտութեան անբաժան մէկ մասնիկն ալ Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի ըսկաուտներն են, որոնք միջ-մասնաճիւղային իրենց 11-րդ բանակումը նուիրեցին 100-ամեայ այս յօրհանին:

Այսպէս, սկաուտական ընթացիկ տարեշրջանը իր աւարտին հասաւ տարեկան սպասուած բանակումով, հովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութեան, կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Սկաուտ. Խորհուրդին:

«Շալակս 100՝ երազս անվերջ» նշանաբանով բանակումը տեղի ունեցաւ Սալամինայի Գանազիա շրջանի ծառախիտ բանակավայրէն ներս, մէկ շաբթուան տեւողութեամբ, 1-8 Յուլիս, հա-

մախմբելով 60 բանակողներ:

Յաւելեալ, բանակումը սկսելէ առաջ, 29-30 Յունիսին, 20 քոյրեր ու եղբայրներ երէցական փաղանգէն, խմբապետական կազմէն եւ Շրջանային ըՍկաուտ. Խորհուրդէն մասնակցեցան բանակումի կազմակերպման եւ բանակավայրի պատրաստութեան աշխատանքներուն:

Մասնակցողներու թուային պատկերը տալու համար ըսենք, որ բանակումին մասնակցեցան 24 գայլիկ-արծուիկներ, 13 արի-արենոյշներ, 15 խմբապետներ, աստիճանաւորներ եւ օգնականներ:

Ինչպէս միշտ, այս անգամ եւս մեր կողքին գտնուեցան Աթէնքի եւ Գոքինիոյ Սկաուտ. Խորհուրդներու 8 քոյրերը, իրենց կողքին ունենալով Շրջանային Սկաուտ. Խորհուրդին կողմէ ներկայացուցիչ մը:

Տասը օրերու ընթացքին մեր կողքին էին նաեւ Շրջանային խմբապետութեան եւ Շրջանային Սկաուտ. Խորհուրդի անդամներ, որոնք կ'այցելէին բանակավայր եւ կ'օժանդակէին բանակումի բազմապիսի աշխատանքներուն:

Նշենք, որ 4 Յուլիսին բանակավայր այցելեց Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութեան կազմը:

Գաղափար մը ունենալու համար ներկայացուած յայտագիրներուն մասին, յայտնենք, որ գայլիկական վոհմակը զբաղեցաւ կակուղ թաթիկի, միաստղի եւ երկաստղի գիտելիքներով եւ մասնագիտական պէճերով, իսկ արիական խումբը՝ Նորընծայի եւ Բ. կարգի գիտելիքներով:

Բանակումին ներքին կեանքը ունեցաւ հիմնական երկու մաս.

- Ա) Դաստիարակչական:
- Բ) Ժամանց եւ գուարճութիւն:

Առաջին բաժինին մէջ դասախօսութիւններ ներկայացուեցան ազգային, սկաուտական, հրէջջ սպասարկութեան, ովկիանոսագիտութեան, բժշկական, հոգեբանական հարցերու, կրօնական, տնտեսական ու վարչագիտական գործառնութեան, անտառի եւ բնութեան, առօրեայ մաքրութեան, լուացքի եւ անուշեղէնի մը պատրաստութեան մասին:

Երկրորդ բաժինով, բանակողները մասնակցեցան ծովու լողանքի, խաղերու, ձեռային աշխատանքի, խարուկահանդէսի եւ երգերու ու անոնց իմաստները գտնելու հաճելի զբաղումներուն:

Երկու հիմնական բաժիններուն զուգահեռ, կ'արժէ անդրադառնալ Սկաուտ. Խորհուրդներու անդամ քոյրերու դերակատարութեան, որոնք բացի օրական 5 անգամ ճաշի պատրաստութենէն, զբաղեցան նաեւ նախնական դարմանումի ու դեղերու խնամքով: Աւելին, դասախօսութիւններուն մէկ մասը կատարեցին անոնք:

Շաբաթ, 7 Յուլիսին, ծնողներու եւ վարչութիւններու ներկայութեամբ, տեղի ունեցաւ բանակումին փակման հանդիսութիւնը, որուն ընթացքին անդ-

րադարձ մը կատարուեցաւ բանակումի կեանքի տարբեր հանգրուաններուն: Յաջորդեց յայտագիր մը՝ երգերով, կանչերով ու զաւեշտներով: Հանդիսութեան ընթացքին խօսք տրուեցաւ Հ.Մ.-Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Յովակիմեանին, որ նշեց թէ վարչութեան նոր կազմին առաջնահերթութիւններէն պիտի ըլլայ իր անդամներուն կողքին գտնուիլը եւ անոնց ազգային ոգիները ներշնչելը:

Ապա, Շրջանային Սկաուտ. Խորհուրդի ատենապետ եղբ. Յարութիւն Մանուկեան խօսեցաւ Վկայեալ կարգի դասընթացքներուն եւ խորհուրդի երկամեայ գործունէութեան տարբեր մարզերուն մասին:

Աւարտին, խարուկահանդէսին կրակմարը փակուեցաւ «Յտեսութիւն» երգով:

ՍԿԱՈՒՏԱԿԱՆ

ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԱՍՏԻՃԱՆԱՏՈՒՉՈՒԹԻՒՆՆԵՐ

Նոյն օրը, բանակավայրէն ներս տեղի ունեցան գայլիկ-արծուիկական խոստման, միաստղի եւ երկաստղի գիտելիքներու եւ մասնագիտական պէճերու, ինչպէս նաեւ՝ արի-արենուշական խումբի Բ. կարգի գիտելիքներու արա-



րողութիւններ: Յաջորդեց երէցներու երգման, վարիչ առաջնորդներու եւ փոխ խմբապետի աստիճաններու պէճերու տուչութիւնը:

Սկաուտական վերջին արարողութիւնը Վկայեալ կարգի պէճի տուչութիւնն էր: Վկայեալ կարգը կը վերաբերի սեմինարային շարքի մը, որ սկսաւ երկու տարի առաջ եւ աւարտեցաւ անցնող Յունիսին: Նիւթերը, որոնք ներկայացուցան յատուկ դասընթացքներով, առնչուած էին ազգային, միութենական, սկաուտական, քաղաքական, հոգեբանական ու մանկավարժական թեմաներու: Սեմինարային շարքին նպատակն էր կազմաւորել փորձառու աս-

տիճանաւորներ, որոնք պատրաստ պիտի ըլլան դաստիարակելու յաջորդող սերունդները:

Վկայեալ պէճին արժանացան հետեւեալ Հ.Մ.-Ը.Մ.ականները.՝ քոյրեր Գոհար Ալիանաքեան, Անասթասիա Գոյումճեան, Լոուի Պարագեան, եղբայրներ Սերգօ Մովսէսեան, Եղիշէ Շահպագեան, Խաչիկ Մինասեան, Յովիկ Ապրոյեան, Օննիկ Աւագեան եւ Վիգէն Մինասեան:

Սկաուտական արարողութիւնները փակուեցան դրօշակի արարողութեամբ եւ Յունաստանի, Հայաստանի եւ Հ.Մ.-Ը.Մ.ի քայլերգներուն երգեցողութեամբ:

ՄԱՅԻՍԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐՈՒՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՖՈՒԹՊՈՂԻ ՄՐՅՈՒՄՆԵՐ

Լուսի Մովսէսեան ԱԹԵՆՔ

Մայիսեան յաղթանակներու նուիրուած տօնակատարութիւններու ծիրէն ներս, Շաբաթ, 26 Մայիսին, Հ.Մ.-Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութիւնը կազմակերպեց ֆութպոլի մրցումներ, որոնք տեղի ունեցան Նիքէայի «Փրոտտելիքի» մարզադաշտին մէջ, ներկայութեամբ Նիքէա-Ռենտիի քաղաքապետ Եորղոս Իոաքիմիտիսի:

Մրցումները սկսան կրտսերներու ճակատումներով: Խումբերը բաղկացած էին 12 մարզիկներէ: Անոնք շատ լաւ խաղացին, մեծ գոհունակութիւն եւ ուրախութիւն պատճառելով բոլորին:





Յաջորդեց Ֆիքսի եւ Գոքինիոյ վեթերաններուն մրցումը: Խումբերը բաղկացնող մարզիկներուն տարիքը 35-70ի միջեւ էր, ինչ որ կ'ապացուցանէր անոնց սէրը այս մարզաձեւին հանդէպ: Խումբերը կազմած մարզիկներու մեծ թիւին պատճառով, մարզիկները շատ անգամ մէկը միւսը փոխարինեցին եւ կարողացան բոլորը մասնակցիլ մրցումին:

Մրցումներու աւարտէն ետք, բոլոր մարզիկները մարզադաշտին կեդրոնը հաւաքուեցան: Հ.Մ.Ը.Մ.ի Գոքինիոյ եւ Ֆիքսի սկաուտական խումբերը տողանցք կատարելով՝ անոնք եւս մարզադաշտին կեդրոնը խմբուեցան:

Ապա, խօսքեր արտասանեցին Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի

Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յարութիւն Խաչատուրեան եւ քարտուղար եղբ. Յակոբ Յովակիմեան: Եղբ. ատենապետը իր խօսքին մէջ ըսաւ, թէ այս մրցումները առիթ թր տուին Հ.Մ.Ը.Մ.ին տօնակատարելու Մայիս 28-ի յաղթանակը, որ կերտուեցաւ մեծ պայքարներով:

Յետոյ մետալներ բաժնուեցան բոլոր մարզիկներուն եւ խումբերու մարզիչներուն: Մետալներ տրուեցան նաեւ մրցումներու իրաւարարին եւ վերատեսուչներուն:

Մրցումները իրենց աւարտին հասան խանդավառ մթնոլորտի մէջ:

ARMENIA
for private and group trips
www.saberatours.fr

- Direct Flights
PARIS
YEREVAN
PARIS
- Select your Journey
- Guided Tours for 8 Days or 12 Days

Saberatours Sevan Voyages

WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY

Armavia Արմավիա

Photos: © Yann Arthus-Bertand, Terre vue du Ciel. Licence 075 960031 Studio VICKEN 2005 PARIS

11, rue des Pyramides 75001 Paris tel 331 42 96 10 10 fax 331 42 96 18 77 saberatours@selectour.com	48, cours de la Liberté 69003 Lyon tel 334 78 60 13 66 fax 334 78 60 92 26 sevan@selectour.com	67, La Canebière 13001 Marseille tel 334 95 09 30 60 fax 334 95 09 30 61 marseille@wasteels.fr	32-38, rue Hanrabedoutian Yerevan tel 374 10 52 55 55 fax 374 10 56 40 30 sabera@arminco.com	



Հ.Մ.Ը.Մ.Ի ԲՈՒԷՅԹԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՄԱՅԻՍԵԱՆ ՓԱՌԱՏՕՆԸ

Թղթակից
ԲՈՒԷՅԹ

Կազմակերպութեամբ Հ.Մ.-Ը.Մ.ի Քուէյթի Մեկուսի մասնաճիւղի վարչութեան, հովանաւորութեամբ Քուէյթի եւ Արաբական Ծոցի Երկիրներու Կաթողիկոսական Փոխանորդ Շահէ Եպս. Փանոսեանի, նախագահութեամբ Պէպթրիս Մելիքսէթեանի, Ուրբաթ, 1 Յունիս 2012-ին, տեղի ունեցաւ Մալիսեան փառատօն, նուիրուած՝ Հայաստանի Ա. Հանրապետութեան 94-րդ տարեդարձին:

Հանդիսութեան պատուոյ հիւրերն էին Քուէյթի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Ֆատէյ Չարչոյիեան եւ դեսպանատան առաջին քարտուղար Արմէն Սարգիսեան: Ներկայ էին գաղութի պատկան մարմիններու ներկայացուցիչներ, Հ.Մ.-Ը.

Մ.կան քոյրեր եւ եղբայրներ, ինչպէս նաեւ մօտ 300 հանդիսականներ:

Փառատօնին հանդիսաւոր բացումը կատարուեցաւ Քուէյթի եւ Հայաստանի քայլերգներով:

Մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Անդրանիկ Գուզուեան բացման խօսքով անդրադարձաւ Մալիսեան յաղթանակներու կարեւորութեան եւ անոնց շնորհիւ հայկական պետականութեան վերականգնման փաստին: Ան յայտնեց, որ Մալիսեան յաղթանակը հայ ժողովուրդը պարտական է իր հերոսներուն, պարտական է Սարգարա-

պտի, Բաշ Ապարանի եւ Ղարաքիլիսէյի ճակատամարտներուն:

Եղբայրը անդրադարձաւ նաեւ Հ.Մ.-Ը.Մ.ի ստեղծման պատմական հանգրուաններուն եւ արժեւորեց Հ.Մ.-Ը.Մ.ի դերը՝ ազգակերտումի եւ հայկերտումի նուիրական առաքելութեան մէջ:

Այնուհետեւ, հրաւիրուեցաւ հանդիսութեան նախագահ Պէպթրիս Մելիքսէթեանը փոխանցելու իր սրտի խօսքը:

Մելիքսէթեանը գնահատելով Հ.Մ.-Ը.Մ.ի դերը ընդհանրապէս եւ ի մասնաւորի գաղութին մէջ, ըսաւ. «Ես կը հաւատամ Հ.Մ.-Ը.Մ.ի առաքելութեան եւ տարած աշխատանքին: Այն վստահութիւնը ունիմ, որ Հ.Մ.-Ը.Մ.ի Քուէյթի Մեկուսի մասնաճիւղը պիտի շարունակէ մեր նորահաս սերունդի հոգեմտաւոր դաստիարակութեան նրւիրական աշխատանքը»:

Մելիքսէթեան մասնաճիւղին ատենապետին ձեռամբ պարգեւատրուեցաւ յուշանուէրով մը:

Հրաւիրուեցան Շահէ Եպս. Փանոսեանը եւ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Ֆատէյ





Քուէթի մասնաճիւղի ատենապետ եղբ. Անդրանիկ Գուգուեան յուշանուէրներով կը պատուէ հանդիսութեան նախագահ Պէաթրիս Մելիքութեանը եւ Քուէթի եւ Արաբական Ծոցի երկիրներու Կաթողիկոսական Փոխանորդ Շահէ Եպս. Փանոսեանը: Աջին՝ Պէաթրիս Մելիքութեան յուշանուէր մը կը յանձնէ Հայաստանի դեսպան Ֆատէյ Չարչօլլեանի:

Չարչօլլեանը արտասանելու համար իրենց սրտի խօսքերը:

Իր խօսքին մէջ դեսպանը ըսաւ. «Այն ինչ տեղի ունեցաւ 1918 թուականի Մալիսեան բախտորոշ այդ օրերին, իր տարողութեամբ ու նշանակութեամբ աննախադէպ էր մեր պատմութեան մէջ: Հայաստանի Հանրապետութեան տուած առաջին դասը ազգային միասնութեան դասն է: Մենք միշտ յաղթել ենք, երբ մի կամք ու մի բռունցք են եղել մեր ուժերը: Վկայ՝ Վարդանանց կռիւր, վկայ՝ Սարգարապատը, վկայ՝ Արցախեան ազատամարտը:

«Սարգարապատի կռուում մենք մենակ էինք եւ յաղթեցինք մեր միասնութեամբ: Անկախութեան յաջորդ դասը սե-

փական ուժերուն ապաւինելու դասն է:

Այսօր էլ, երբ հայ ժողովրդի առջեւ բազմաթիւ խնդիրներ են կանգնած, մենք պէտք է լաւ սերտենք սեփական ուժերին ապաւինելու հարցը: Եւ սերտում ենք:

Վկայ Կրկմանի, Մարտակերտի, Շահումեանի հերոսամարտերը, Շուշիի ազատագրումը եւ Արցախի գոյութիւնն ընդհանրապէս»:

Խօսքէն ետք, դեսպան Ֆատէյ Չարչօլլեան յուշանուէրով մը պարգեւատրուեցաւ հանդիսութեան նախագահին ձեռամբ:

Իր կարգին, Սրբազան Հայրը ըսաւ. «Այժմ, Հայաստանի անկախութեան Ծիր թարեղարձին առիթով եւ Մալիսեան

փառատօնի այս խանդավառ միջնորդութիւն մէջ, դարձեալ կանգնած ենք մեր ազգային Եռագոյն դրօշին դիմաց, որ պէսզի ըմբոշին ենք այս ափերուն վրայ ու Հ.Մ.Ը.Մ.ական շարքերուն մէջ հասակ առնող մեր զաւակներուն շքերթը:

«Անցնող տասնամեակներուն եւ առհասարակ, ամէն Մայիս 28-ի, Սփիւռքի մէջ հասակ առած եւ առաւելաբար Հ.Մ.Ը.Մ.ական դաստիարակութեամբ անած բազմաթիւ սերունդներ, հալարտօրէն տողանցեցին այս դրօշին դիմացէն, որպէսզի իրենց մէջ ամրացնեն ազգային հասկացողութիւն ու կամք եւ իրենց շքերթով պատիւ ընծայեն յաւերժական Հայաստանին:

«Մալիսեան շքերթներու այս պահը





միշտ ալ հայրենասիրական բաղձանքով ալեկոծած է մեզ եւ վեհուկթիւն պատճառած է մեր հոգիներուն, որովհետեւ նման առիթներով մենք տեսած ենք, թէ ինչպէս հայրենիքէն հեռու եւ աշխարհէն եկող բոլոր հոսանքներուն դիմաց, Հ.Մ.Ը.Մ-ի շարքերուն մէջ, շարունակաբար կը պատրաստուին հայապահպանման բանակի նոր զինուորներ:

«Քուէյթի մէջ ապրող մեր գաւակներուն համար ալ, Հ.Մ.Ը.Մ-ը եղաւ եւ կը մնայ կազմաւորման ամենաապահով միջավայրը եւ անկասկած, այստեղ ալ, Հ.Մ.Ը.Մ-ի աշխատանքները կը տարւին ի խնդիր մեր գոյութեան եւ ի սպաս մեր հայրենիքին:

«Այս հասկացողութեամբ եւ հանդի-



սաւոր այս պահուն, սրտագինս կը շնորհաւորեմ Հ.Մ.Ը.Մ-ի Քուէյթի Մեկուսի մասնաճիւղը, որ մեր նորագոյն սերունդին մօտ տարած իր մէկ տարուան աշխատանքին պատկերը կը պարզէ մեր աչքերուն դիմաց ու մեր վայելքին համար:

«Մաղթանքս է, որ մեր գաւակներուն հոգիներուն մէջ շարունակաբար ծաղկի հայաբոյր կեանք եւ թող որ Աստուած մնայուն դառնայ մեր բոլոր աշխատանքներուն մէջ ու մեր կեանքի բոլոր ճամբաներուն վրայ»:

Ապա, Հ.Մ.Ը.-



Մ-ի Քուէյթի Մեկուսի մասնաճիւղի ատենապետին ձեռամբ յուշանուէրով մը պարգեւատրուեցաւ Շահէ Եպս-Փանոսեան:

Այս առիթով, մասնաճիւղին սկաուտուկթիւնը ներկայացուց կոկիկ յայտագիր մը:

Յայտագիրը ընդգրկեց կենդանի պատկեր, երգեր, հայկական պար, բուրգի կազմութիւն, կակուղ թաթիկի պար, մարզական ձեւեր, սկաուտական աշխատանքներ եւ այլն:

Յայտագիրը արժանացաւ ներկաներու քաջալերանքին եւ ծափահարութեան:

Հուսկ, հնչեց շեփորախումբը, որ առաջնորդեց Հ.Մ.Ը.Մ-ականներու փառանգը:

Յաղթական քայլերով անցան արիները, արենոյններն ու գայլիկները, պասքեթպոլի աղջկանց խումբը եւ Ֆուլթպոլի տղոց խումբը: Անոնք խումբ-խումբ շարուեցան դաշտին կեդրոնը՝ հանդիսականներուն դիմաց:

Այնուհետեւ կատարուեցաւ աստիճանատուչութիւն, սկաուտական կարգի փոխանցում, լաւագոյն խումբերու գնահատանք եւ մարզական մրցաշարքերուն (Ֆուլթպոլի, պասքեթպոլի, պոլինկի, պիլիարտի, փինկ-փոնկի) ախոյեան հանդիսացողներու մետալներու բաշխում:

Փառատօնը վերջ գտաւ Հ.Մ.Ը.Մ-ի քայլերգով:





Հ.Մ.Ը.Մ.Ի «ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ» ՇՔԱՆՇԱՆԻ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ ՃԻՒՆԻՒՄԱՄՆԱՃԻՒՂԻ ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒ

Թղթակից ճիՒՆԻ

Շաբաթ, 9 Յունիս 2012-ին, Հ.Մ.Ը.Մ.ի ձիւնիի ակումբի «Ժան Ապաճեան» սրահին մէջ տեղի ունեցաւ յատուկ հանգիստութիւն մը, որուն ընթացքին Հ.Մ.Ը.Մ.ի «Ծառայութեան» շքանշան եւ գնահատական գիր ստացան եղբայրներ Սելիմ Չամիչեան եւ Չարեհ Պալեան, որոնք երկրէն դուրս գտնուելով՝ բացակայած էին 21 Յունուար 2012-ի պարգեւատրման հանգիստութենէն (Տեսնել «Մարզիկ» թիւ 356, էջ 36-37):

Այս առիթով ձիւնիի ակումբ ներկայ էին Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան, Հ.Յ.Դ. «Հրայր Մարուխեան» կոմիտէի, շրջանին մէջ գործող միութիւններու եւ մարմիններու ներկայացուցիչները, ձիւնիի մասնաճիւղին վարչութիւնը, Հ.Մ.Ը.Մ.ական քոյրեր,

եղբայրներ եւ հրաւիրեալներ:

Լիբանանի եւ Հայաստանի քայլերդներուն ունկնդրութենէն ետք, հանդիսութեան բացումը կատարեց մասնաճիւղի ատենապետ եղբ. Բաֆֆի Ատուրեան, որ ներկաներուն բարի գալուստ մաղթելէ ետք՝ հրաւիրեց մասնաճիւղին մօտ Շրջանային Վարչութեան լիազօր ներկայացուցիչ եղբ. Բաֆֆի Կէվօղլանեանը փոխանցելու իր խօսքը: Եղբ. Կէվօղլանեան հաստատեց, որ ձիւնիի վարչութիւնը աշխոյժ աշխատանք կը տանի վերակազմակերպելու համար մասնաճիւղը: Ան բարձր գնահատեց երէց եղբայրներու տարիներու ներդրումը ձիւնիի մասնաճիւղին:

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան խօսքը փոխանցեց եղբ. Հայկ Թապազեան: Եղբայրը հաստատեց, որ 1950-ին Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքը ընդհանրապէս եւ Լիբանանի Հ.Մ.Ը.Մ.ը յատկապէս կ'ուռճանար նոր մասնաճիւղով մը՝ ձիւնիի մասնաճիւղին հիմնադրութեամբ: Այդ թուականէն ըս-

կսեալ, ձիւնիի ակումբը ժամադրապաշար կը դառնար Հ.Մ.Ը.Մ.ի ձիւնիի ընտանիքին եւ շրջանի հայութեան: Եղբ. Թապազեան աւելցուց, որ ձիւնիի մասնաճիւղը տարիներ շարունակ, հակառակ երկրի քաղաքական ու տնտեսական ծանր պայմաններուն, յաղթահարեց ստեղծուած կացութիւնները, կարողացաւ վերակազմակերպուիլ ու մասնաճիւղը պահել ամուր հիմերու վրայ:

Իր խօսքին աւարտին, եղբ. Թապազեան Շրջանային Վարչութեան անունով շնորհաւորեց մասնաճիւղին վարչութիւնը, անդամները, սկստակական ու մարզական խումբերը՝ նորանոր յաջողութիւններ ու վերելք մաղթելով մասնաճիւղին:

Ապա, ան հրաւիրեց Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Քէշիչեանը, որ պէսզի կատարէ «Ծառայութեան» շքանշաններու տուչութիւնը:

Հ.Մ.Ը.Մ.ական վաստակաշատ երկու եղբայրներու՝ Սելիմ Չամիչեանի եւ Չարեհ Պալեանի միութեանական գործունէութեան ներկայացումէն ետք, եղբայրներ Չամիչեան եւ Պալեան բեմ բարձրացան եւ պարգեւատրուեցան Շրջանային Վարչութեան ատենապետին ձեռամբ:

Չեռնարկին աւարտին, Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան ատենապետը շնորհաւորեց զոյգ եղբայրները՝ յոյս յայտնելով, որ յաջորդ սերունդները կը գործեն օրինակ ունենալով զանոնք:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԺԸՏԷՅՏԷԻ ՄԱՄՆԱՃԻԻՂԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹԸ

Թղթակից ԺԸՏԷՅՏԷ



Շարաթ, 5 Մայիսի երեկոյեան, «Լր Փինիոն» ճաշարանին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Ժրտէյտէի մասնաճիւղին տարեկան ճաշկերոյթը՝ հովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի Շրջանային Վարչութեան:

Ճաշկերոյթին մասնաճիւղի վարչութեան խօսքը արտասանեց եղբ. Յովսէփի Համամճեան: Ան իր խօսքին մէջ անդրադարձաւ հայ սկաուտութեան հիմնադրութեան 100-ամեակին՝ նշելով, որ աւելի քան 100 տարի առաջ, Պոլսոյ թաղերէն մէկուն մէջ տեղի ունեցաւ հայ սկաուտական խումբերու առաջին երթը, որ կը նպատակադրէր հայ պատանիին ու երիտասարդին մէջ նախ կերտել մարդը, հայր եւ ապա՝ սկաուտը: Եւ այդպէս սկսաւ երթը միութեան մը, որ ահա 100 տարիէ ի վեր կանգնած է պատնէշի վրայ՝ դիմակալելով ամէն տեսակի մարտահրաւէրներ:

Եղբ. Համամճեան խօսքին մէջ շեշտը դրաւ Հ.Մ.Ը.Մ.Ի դերակատարութեան

վրայ՝ յայտնելով, որ Հ.Մ.Ը.Մ.ը ունեցած է եւ ունի մեծ նշանակութիւն հայ ժողովուրդի կեանքին մէջ ընդհանրապէս եւ նոր սերունդներու բարոյական եւ հոգեւոր դաստիարակութեան պատասխանատու գործին մէջ մասնաւորապէս: Ան նշեց. «Վստահ ենք, որ այսօր ձեր քաջալերանքով ու ներկայութեամբ կը հաստատէք այդ իրականութիւնը եւ յոյս ու կեանք կը ներշնչէք Հ.Մ.Ը.Մ.ին, որպէսզի ան յարատեւէ նոր նուաճումներով, նոր հաւատքով եւ նոր 100-ամեակներու կերտումով:

Եղբ. Համամճեան իր խօսքին մէջ ողջունեց Հ.Մ.Ը.Մ.Ի դրօշը եւ այդ դրօշը բարձր պահած կամաւոր բանակը՝ բիւր յարգանք մատուցելով Հ.Մ.Ը.Մ.Ի մեծ ընտանիքին եւ այդ ընտանիքը առողջ

պահող համակիրներուն ու ծնողներուն:

Եղբ. Համամճեան խօսքը եզրափակեց ըսելով. «Կը հաւատանք, որ սկաուտական «միշտ պատրաստ» կարգախօսով 100 տարի առաջ ընթացք առած երթը պիտի շարունակուի: Հայութեան ծառայութեան լծուած այս միութեան երթը կանգ պիտի չառնէ: Այնքան ատեն որ հայութիւնը դատ ունի, Հ.Մ.Ը.Մ.ը պիտի շարունակէ ըլլալ իր հայրենի հողէն հեռու ապրող սերունդները հայօրէն կերտելու առաքելութեան լծուած կառույցը, որուն երդիքին տակ հասակ առին ու պիտի առնեն այնպիսի հայեր, որոնք մնայուն ձգտումը պիտի ունենան Արարատի կատարին հայոց Եռագոյնին ծածանումը տեսնելու»:

Այնուհետեւ, բեմ բարձրացաւ երգիչ Վարդանաքին եւ ճոխացուց միջնուորտը: Պարահանդէսին յաւելեալ խանդ եւ ճոխութիւն պարգեւեց Սեւան Աղամեանը, երբ իր գեղեցիկ կատարողութեամբ մեկնաբանեց էսդրատային եւ ժողովրդային երգերու շարք մը: Տեղի ունեցաւ նաեւ վիճակահանութեան վաճառք եւ վիճակաձգութիւն:

ՄԱՅԻՍԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԻ ՓԱՌԱՏՕՆ՝ ԱՅՆՃԱՐԻ ՄԷՉ

Թղթակից ԱՅՆՃԱՐ

Մայիսը ոչ միայն յաղթանակներու ամիս է, այլեւ՝ միասնութեան, հպարտութեան, ինքնահաստատման, ինչպէս նաեւ Հայաստանի Ա. Հանրապետութեան 94-րդ տարեդարձին ամիսն է:

Մայիս 28-ն է, որ հայ ժողովուրդին ազգային կամքն ու տեսլականը վերահաստատեց: Բոլորս պարտաւոր ենք նորահաս սերունդները դաստիարակելու Մայիս 28-ի շունչով ու հպարտութեամբ:



Մեկնելով Մալիս ամսուան կարեւորութենէն, Հ.Մ.Ը.Մ-ի Այնճարի մասնաճիւղը, գործակցութեամբ Հ.Յ.Դ. «Կարմիր լեռ» կոմիտէի դաստիարակչական-քարոզչական յանձնախումբին, Մալիս ամիսը յայտարարեց մարզական ձեռնարկներու ամիս, որուն ընթացքին կազմակերպուեցան Ֆուտպոլի ու պասքեթպոլի մրցումներ գիւղի բոլոր վարժարաններուն, Հ.Մ.Ը.Մ-ի եւ Հ.Յ.Դ. ԼԵՄ-ի «Շաւարշ Միսաքեան» մասնաճիւղի խումբերուն միջեւ՝ 18, 19, 20 եւ 26 Մալիսին:

Մալիսեան յաղթանակին նուիրուած փառատօնը տեղի ունեցաւ Շաբաթ, 26 Մալիսի երեկոյեան ժամը 7.30-ին, Հ.Մ.Ը.Մ-ի Այնճարի մասնաճիւղի պասքեթպոլի դաշտին վրայ, հովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան:

Փառատօնին ներկայ էին Այնճարի հոգեւոր հայրերը, քաղաքապետը, Հ.Յ.Դ. «Կարմիր լեռ» կոմիտէն, միութիւններու, յանձնախումբերու եւ մարմիններու ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ հոծ թիւով բազմութիւն մը:

Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտները եւ սկաուտական խմբապետական կազմը, գլխաւորութեամբ խմբապետ եղբ. Ժան Փամպուլքեանի, կատարեցին դրօշակի արարողութիւնը՝ հպարտ ու հաստատ քայլերով, ապա Լիբանանի եւ Հայաստանի քայլերգներով բացումը կատարուեցաւ Հայաստանի Ա. Հանրապետութեան անկախութեան 94-ամեակի հանդիսաւոր տօնակատարութեան:

Հ.Մ.Ը.Մ-ի խօսքը արտասանեց եղբ. Սեպուհ Պոյաճեան: Ան հաստատեց, որ ժամանակակից հայոց պատմութեան մէջ ամէնէն ազգային եւ արժանապատիւ սիրագործութիւնն է 28 Մալիս 1918-ն՝ աւելցնելով, որ հայ ժողովուրդը կարողացաւ դարբերու ստրկութենէ ետք անկախ պետութիւն ստեղծել: Ան շեշտեց նաեւ, որ անկարելի է չլիչել հերոս Պետիկ Ինճեանը՝ իբրեւ տիպար, գործունեայ եւ հաւատարիմ Հ.Մ.Ը.Մ-ական:

Բացման խօսքէն անմիջապէս ետք, օրուան բանախօսը՝ Շահան Գանտահարեան խօսք առնելով ըսաւ. «Պարզ է, որ եթէ չըլլար Հայաստանի Ա. Հանրապետութիւնը, չէր ըլլար Խորհրդային Հայաստանը եւ չէր ըլլար մեր հայրենիքի երկրորդ վերանկախացումը: Պիտի չըլլար նաեւ հայկական այսօրուան երկրորդ Հանրապետութիւնը՝ Լեռնային Ղարաբաղի անկախ հանրապետութիւնը»: Անդրադառնալով միասնականութեան, ան նշեց, որ Սարդարապատի ճակատամարտը գոյութիւնը պահելու կռիւ էր, հայութիւնը այս կռիւէն

պատուով դուրս եկաւ, մէկ մարդու նման ծառացաւ թշնամիին դէմ եւ փրկեց իր գոյութիւնը, կերտեց իր հայրենիքին անկախութիւնը:

Մալիս 28-ն կարեւոր թուական նկատելով հայոց պատմութեան մէջ, Գանտահարեան նշեց. «Մալիս 28-ն սոսկ անկախութեան հռչակման օր չէ, մեր ազգի փրկութեան, մեր լինելութեան շարունակականութեան եւ մեր ազգի գոյատեւումը ապահովող մեծ թուական է, խորհուրդ է, եւ իբրեւ այդպիսին անգերազանցելի կշիռ ու իմաստ ունի համայն հայութեան պատմութեան մէջ»:

Իր խօսքը երիտասարդութեան ուղղելով՝ Շահան Գանտահարեան հաստատեց, որ Հայաստանի քաղաքացիութիւն ստանալը վաղուան համահայկական հասարակութեան ձեւաւորման նպաստող հիմնական գործօնն է:

Բանախօսութենէն ետք, Հ.Մ.Ը.Մ-ի Այնճարի շեփորախումբը՝ ղեկավարութեամբ եղբ. Պողոս Քէնտիրճեանի, ներկայացուց ազգային-յեղափոխական երգերու շարք մը եղանակներ՝ ոգեւորելով ներկայ ժողովուրդը:

Ապա տեղի ունեցաւ Մալիսեան խաղերու մետալներու բաշխման արարողութիւնը: Այնճարի միջ-դպրոցական Ֆուտպոլի բաժակը ստացաւ հայ կաթողիկէ վարժարանի խումբը, իսկ պասքեթպոլի բաժակը ստացաւ հայ աւետարանական վարժարանի խումբը:

Հ.Մ.Ը.Մ-ի եւ Հ.Յ.Դ. ԼԵՄ-ի «Շաւարշ Միսաքեան» մասնաճիւղին միջեւ տեղի ունեցած Ֆուտպոլի եւ պասքեթպոլի մրցումներուն Ֆուտպոլի բաժակը ստացաւ Հ.Մ.Ը.Մ-ը, իսկ պասքեթպոլի բաժակը՝ ԼԵՄ-ը:

Տեղին է նշել, որ բոլոր մասնակցող մարզիկները ստացան մետալներ: Մրցանակաբաշխումը կատարեցին քաղաքապետ Կարօ Փամպուլքեան, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Վրէժ Թագեան, գիւղի դպրոցներու տնօրէններ Արմէն Թաշճեան, վեր. Բաֆֆի Մսրրլեան եւ քոյր Երմոնէ, ինչպէս նաեւ՝ Հ.Մ.Ը.Մ-ի Այնճարի մասնաճիւղի ատենապետ եղբ. Յարութ Զատիկեան եւ Հ.Յ.Դ. «Կարմիր լեռ» կոմիտէի դաստիարակչական-քարոզչական յանձնախումբի ատենապետ Կարօ Փիլաճեան:

Փառատօնի աւարտին հնչեց յեղափոխական երգերու շարք մը՝ մեկնաբանութեամբ Սերոբ Յակոբեանի, ընկերակցութեամբ Սեդօ Պաղտասարեանի:

ԼԵՎԱՄ-Ի 2011-2012 ՏԱՐԵՇՐՉԱՆԻ ՓԱԿՄԱՆ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ

Թղթակից ՊԵՅՐՈՒԹ

Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շըր-Ղանային Վարչութեան հովանաւորութեամբ, ԼԵՎԱՄ-ի 2011-2012 տարեշրջանի մարզախաղերուն փակման հանդիսութիւնը տեղի ունեցաւ Կիրակի, 13 Մայիս 2012-ին, «Աղբալեան-Հ.Մ.Ը.Մ.» մարզամշակութային համալիրի «Ատոմ եւ Սելլա Թնճուկեան» մարզադաշտին վրայ, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ-ական պա-



տասխանատուներու, հիւրերու եւ դաշտը ողողած հոծ բազմութեան մը: Հանդիսութեան բացումը կատարեց եղբ. Զաւէն Տէր Պետրոսեան: Ան ըսաւ, որ ԼԵՎԱՄ-ի մարզախաղերը կարելոր միջոց մըն են իրագործելու Հ.Մ.Ը.Մ-ի

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby


HOTEL



PAVILLON MONCEAU
PARIS

Full of charme,
Tastefully decorated 36 rooms
and 6 suites with individual
heating / air conditioning,
direct access telephone line,
internet connection, minibar,
safety box and satellite TV.
Private bathroom with hairdryer.
The suites can accommodate
3 adults or a family
with parents and 2 children.

PAVILLON MONCEAU



43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38

infos@pavillon-monceau.com
www.pavillon-monceau.com



Մրցանակակիր աշակերտներ:

հիմնական նպատակները, կերտելու առողջ, հայրենասէր, արի եւ ազնիւ հայեր, ինչպէս ասկէ 66 տարիներ առաջ

Նիկոլ Աղբալեան կը հաստատէր՝ «Մեծ է դերը Հ.Մ.Ը.Մ-ի: Այս դերը ըմբռնելու համար անհրաժեշտ է ազգային բարձր

գիտակցութիւն, այսինքն՝ մեր ուժերու, մեր արժէքի, մեր ընթացքի եւ նպատակի պայծառ ըմբռնում: Յարգանք եւ պատկառանք այս աշխարհին մէջ ուժով կը ստացուի, կը պարտադրուի եւ կը ներշնչուի: Իսկ ուժեղ են առողջն ու կորովին»:

Բացման խօսքէն ետք հնչեցին Լիբանանի եւ Հայաստանի քայլերգները:

Խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ԼԵՎԱՄ-ի յանձնախումբի անդամ քոյր Շադիկ Ճինպաշեան: Ան ըսաւ, որ ամբողջ տարեշրջան մը միասնաբար գործակցելէ ետք՝ ահաւասիկ հասած է ԼԵՎԱՄ-ի մրցաշարքերուն փակման օրը: Յոյսով ենք, որ կրթական յառաջիկայ վերամուտին հետ կ'ունենանք նոր ժամադրութիւն՝ նորանոր հորիզոններով ու տեսիլքով՝ անգամ մը եւս յաջողութեան հասցնելու համար ԼԵՎԱՄ-ի մրցաշարքերը, մրցելով մարզական ոգիով ու հայավայել ձեւով, իրագործելու համար ԼԵՎԱՄ-ի նպատակը, որն է ու կը մնայ՝ եղբայրական միջնորդութիւն մէջ մարզական մրցակցութիւն ունենալ, դպրոցի կրթութեան եւ դաստիարակութեան կողքին ստանալ նաեւ մարմնակրթական դաստիարակութիւն՝ ըլլալու համար տիպար հայ քաղաքացիներ»:

Յաջորդ խօսքը արտասանեց Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Քէշիշեան: Եղբայրը շնորհակալութիւն յայտնեց ԼԵՎԱՄ-ի մասնակից վարժարաններուն, մարզանքի ուսուցիչներուն եւ



Ճատրակի մրցումներու մրցանակակիր աշակերտները Լիբանանի Ճատրակի ֆետերասիոնի նախագահ Նապիլ Պատորի, Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Քէշիշեանի եւ Ճատրակի ֆետերասիոնին մօտ Հ.Մ.Ը.Մ-ի ներկայացուցիչ եղբ. Վարդան Նաճարեանի հետ:



Համազգայինի Մ. եւ Հ. Արսլանեան ճեմարանի մրցանակակիր աշակերտներու խումբ մը:

Մրցանակակիր աշակերտներ:



պատասխանատուներուն, ապա ան հպարտութեամբ յայտարարեց, որ ԼԵՎԱՄ-ի այս տարեշրջանի մարզախաղերուն իրենց մասնակցութիւնը բերած են 26 հայկական վարժարաններ եւ մօտաւորապէս 900 աշակերտներ, ինչ որ աննախընթաց թիւ է ԼԵՎԱՄ-ի պատմութեան մէջ»:

«Արդ,- շարունակեց եղբ. Քէշիշեան,- առիթը պատեհ կը զգանք շնորհակալութիւն յայտնելու ԼԵՎԱՄ-ի մարզախաղերու հովանաւոր Հայկազեան համալսարանին եւ համալսարանի նախագահ վեր. Փօլ Հայտոսթեանին, որ տարիներէ ի վեր նեցուկ կը կանգնի ԼԵՎԱՄ-ի առաքելութեան եւ անոր յաջողութեան»:

Հայկազեան համալսարանին խօսքը արտասանեց վեր. դոկտ. Փօլ Հայտոսթեան: Տպաւորիչ խօսքով մը վերապատելին ըսաւ. «Եթէ մրցում չըլլար, այդ ժամանակ ամէն մարդ պիտի կարծէր, որ ինք յաւաքոյնն է, առաջինն է եւ սորվելիք բան չունի, փորձ պէտք չունի ընելու»:

«Եթէ իրաւարար չըլլար, ամէն մարդ պիտի կարծէր, որ իրն է իրաւունքը, իրն է յաղթանակը»:

«Եթէ մարզող չըլլար, ամէն մարդ իր տկարութեան մէջ պիտի մրցէր մնացեալներուն հետ»:

«Եթէ մարզիկ չըլլար, խաղ պիտի չըլլար»:

«Եթէ հայ դպրոց չըլլար, միասին առիթ պիտի չունենայինք հաւաքուելու, ծանօթանալու, գործակցելու եւ միասնաբար բարձր պահելու հայ երիտա-

սարդին, պատանիին անունը:

«Եւ եթէ այս բոլորը հաւաքողը չըլլար, Հ.Մ.Ը.Մ-ի ԼԵՎԱՄ-ի ջանքը չըլլար,

իւրաքանչիւրդ առանձինը պիտի տառապէր տկարութենէ եւ պիտի մեկուսանար իր մարզանքին մէջ»:

Մինի-մարաթոնի եւ դաշտային խաղերու մրցանակակիրները Լիբանանի աթլետիզմի ֆետերասիոնի նախագահ Ապտալլա Շեհապի եւ Շրջանային Վարչութեան անդամ եղբայրներու հետ:



Փինկ-փոնկի մրցումներու մրցանակակիրները Լիբանանի փինկ-փոնկի ֆետերասիոնի ներկայացուցիչին եւ Շրջանային Վարչութեան անդամ եղբայրներու հետ:





Արտասանուած խօսքերուն յաջորդեց գեղարուեստական պար մը՝ ներկայացուած Հայ Կաթողիկէ Մեսրոպեան Վարժարանի աշակերտներուն կողմէ:

Ապա տեղի ունեցաւ պասքեթպոլի «Օլ Սթար կէյմ»ը, որուն ընթացքին մրցեցան ԼԵՎԱՄ-ի նախկին ու ներկայ մարզիկները:

Խաղին առաջին քառորդի աւարտին տեղի ունեցաւ ԼԵՎԱՄ-ի ճատրակի մրցումներու մրցանակակիր աշակերտներու վկայագիրներու բաշխումը: Վկայականներու տուչութիւնը կատարեցին ճատրակի Լիբանանի Ֆետերասիոնի նախագահ Նապիլ Պատրը, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Քէշիշեան եւ Ֆետերասիոնին մօտ Հ.Մ.Ը.Մ-ի ներկայացուցիչ եղբ. Վարդան Նաճարեան:

Կիսախաղին ներկաները առիթը ունեցան վայելելու Ազգային Եղիշէ Մանուկեան Քոլէճի փոքրերու պարախումբը, որ ներկայացուց արաբական տապֆէ մը:

Երրորդ քառորդի աւարտին տեղի ունեցան մինի-մարաթոնի, դաշտային

խաղերու եւ փինկ-փոնկի մրցանակակիրներու վկայագիրներուն բաշխումը: Վկայագիրները յանձնեցին Լիբանանի աթլետիկ միջոցաւորի նախագահ Ապտալա Շեհապ, Շրջանային Վարչութեան անդամ եղբայրներ Նազո Հապիպեան եւ Հայկ Թապագեան:

Խաղի աւարտին, իրաւարարները իրենց յուշանուէրները ստացան Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Քէշիշեանէն, Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Վաչէ Նաճարեանէն եւ Հ.Մ.Ը.Մ-ական վաստակաւոր Ֆուլթպոլիստ եղբ. Յովհաննէս Յուսամեանէն (Ճոքի):

Յուշանուէրներ ստացան նաեւ Ֆուլթպոլի եւ մինի Ֆուլթպոլի մրցաշարքերուն մասնակցած վարժարաններու ներկայացուցիչները:

Յայտարարուեցան մրցանակակիր աշակերտներու անունները-

- ԼԵՎԱՄ-ի Ֆուլթպոլի խաղերուն առաւելագոյն կոլեր նշանակող աշակերտը՝ Շանթ Պալեան (Հայ Կաթողիկէ Գէորգ Հարպոյեան Վարժարան):
- ԼԵՎԱՄ-ի Ֆուլթպոլի խաղերու լա-

ւագոյն աշակերտ՝ Նարեկ Ատուրեան (Ազգային Եղիշէ Մանուկեան Քոլէճ):

● ԼԵՎԱՄ-ի մինի Ֆուլթպոլի կրտսեր տղոց խաղերուն առաւելագոյն թիւով կոլեր նշանակող աշակերտ՝ Կարէն Կարապետեան (Հայ Կաթողիկէ Մեսրոպեան Վարժարան):

● ԼԵՎԱՄ-ի մինի Ֆուլթպոլի միջակ տղոց խաղերուն առաւելագոյն թիւով կոլեր նշանակող աշակերտ Յակոբ Յակոբեան (Ազգային Սուրէն Խանամիրեան Վարժարան):

● ԼԵՎԱՄ-ի մինի Ֆուլթպոլի մեծ տղոց խաղերուն առաւելագոյն թիւով կոլեր նշանակող աշակերտ Արա Փանոսեան (Հայ Աւետարանական Շամլեան Թաթիկեան Վարժարան):

● ԼԵՎԱՄ-ի մինի Ֆուլթպոլի խաղերու միջակ տղոց լաւագոյն աշակերտ՝ Շանթ Գէորգեան (Համազգայինի Մ. եւ Հ. Արսլանեան Ճեմարան):

● ԼԵՎԱՄ-ի մինի Ֆուլթպոլի խաղերու մեծ տղոց լաւագոյն աշակերտ՝ Յակոբ Նաճարեան (Համազգայինի Մ. եւ Հ. Արսլանեան Ճեմարան):

Պասքեթպոլի խաղերուն մրցանակները բաշխեցին Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան, Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Քէշիշեան եւ Լիբանանի պասքեթպոլի ֆետերասիոնին մօտ Հ.Մ.Ը.Մ-ի ներկայացուցիչ եղբ. Եղիա Սրապոնեան:

Հետեւեալները ստացան յուշանուէրներ-

● ԼԵՎԱՄ-ի մեծ աղջկանց պասքեթպոլի խաղերուն առաւելագոյն կէտեր նշանակող աշակերտ՝ Մակի Զաքարեան (Համազգայինի Մ. եւ Հ. Արսլանեան Ճեմարան) եւ Լարա Գրաճեան (Ազգային Եղիշէ Մանուկեան Քոլէճ):

● ԼԵՎԱՄ-ի մեծ տղոց պասքեթպոլի խաղերուն առաւելագոյն կէտեր նշանակող աշակերտ՝ Թորոս Մենտիլեան (Հայ Կաթողիկէ Հռիփսիմեանց Վարժարան):

● ԼԵՎԱՄ-ի միջակ տղոց պասքեթպոլի խաղերուն առաւելագոյն կէտեր նշանակող աշակերտ՝ Արամ Աբրահամեան (Համազգայինի Մ. եւ Հ. Արսլանեան Ճեմարան):


● ԼԵՎԱՄ-ի մեծ տղոց պասքեթպոլի խաղերուն առաւելագոյն ռիպաւունտ հա-

«Օլ սթար կէյմ»ի մասնակից ԼԵՎԱՄ-ի նախկին ու ներկայ մարզիկներ:



«Օլ սթար կէյմ»ի իրաւարարները հիւանդանոցները ստանալէ ետք:





Ծնողներն ալ մասնակից՝ գաւակներու մարզական յաջողութիւններուն:

Լաքող աշակերտ՝ Վիգէն Ղորղորեան (Հայ Կաթողիկէ Հռիփսիմեանց Վարժարան):

● ԼԵՎԱՄ-ի միջակ տղոց պասքեթպոլի խաղերուն առաւելագոյն ու պատուա հաւաքող աշակերտ՝ Տէնի Թորոսեան (Հայ Կաթողիկէ Մեսրոպեան Վարժարան):

Այս առիթով, Հայկազեան համալսարանի տնօրէն վեր- դոկտոր Փօլ Հայ-

տոսթեան մրցանակներ յանձնեց հետեւեալ աշակերտ-աշակերտուհիներուն.-

● ԼԵՎԱՄ-ի պասքեթպոլի լաւագոյն մարզիկուհի՝ Մեղրի Թորոս (Համագգայինի Մ. եւ Հ. Արսլանեան Ճեմարան):

● ԼԵՎԱՄ-ի պասքեթպոլի լաւագոյն մարզիկ՝ Թորոս Մենտիլեան (Հայ Կաթողիկէ Հռիփսիմեանց Վարժարան):

● ԼԵՎԱՄ-ի լաւագոյն մարզիկուհի՝

Լոռի Թաշճեան (Համագգայինի Մ. եւ Հ. Արսլանեան Ճեմարան):

● ԼԵՎԱՄ-ի լաւագոյն մարզիկ՝ Սարհատ Գեթսեմանեան (Համագգայինի Մ. եւ Հ. Արսլանեան Ճեմարան):

● ԼԵՎԱՄ-ի լաւագոյն արդիւնք արձանագրող մարզիչ՝ Վարդուկ Մարգարեան (Համագգայինի Մ. եւ Հ. Արսլանեան Ճեմարան):

'Made from one single slice of natural Australian opal'



Classique
OPAL DIAL WATCH

Sarkis Der Bedrossian

*Sams Watchmaker Jeweller Pty. Ltd.
123 Clarence Street
Sydney 2000
Australia*

*Phone: +61 2 9290 2199
fax: +61 2 9262 1630
Website: www.classiquewatches.com
Email: Info@classiquewatches.com*



Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ՎԵԹԵՐԱՆՆԵՐՈՒ ՀԱԻԱԳՈՅԹ՝ ԼՈՍ ԱՆՃԵԼՇՄԻ ՄԷՋ

Շարունակուած Բ. կողքէն



Վեթերաններու անցեալի հաւաքոյթները ընդհանուր առմամբ տեղի ունեցած են Հ.Մ.Ը.Մ.ի եւ վեթերաններու միջնորդութիւն համակիր ճաշարաններու մէջ, սակայն այդ գիշերուան հաւաքավայր ընտրուած էր Փասատինայի Հայ Կեդրոնը: Կեդրոն մը, ուր չըջանի հայրութեան զանազան կարիքներուն ծառայելու անսակարկ պատրաստակամութեամբ իրենց ժողովներն ու աշխատանքները կը տանին Հ.Յ.Դ. «Լեւոնավայր» կոմիտէութիւնը, Հ.Մ.Ը.Մ.ի «Ազատամարտ», ՀՕՄ-ի «Սօսէ» եւ Համագայիւնի «Շահան Շահնուր» մասնաճիւղերը: Շրջանի կոմիտէութեան գնահատելի որոշումով, այդ գիշեր կեդրոնը սիրայօժար տրամադրուած էր նշեալ վեթերան տղոց, որոնց միութենական անցեալը նկատի առած՝ բնականաբար Հայ Կեդրոնը առաւել հարազատ միջավայր մը դարձաւ բոլորին համար:

Ձեռնարկին բացումը կատարեց վեթերան Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Խաչիկ Ճիկէրեան: Ան ներկաներուն բացատրեց ձեռնարկին նպատակը, ապա եղբ. Հրայրին ուղղուած բարի գալուստի խօսքերէն ետք՝ բարի վայելում մաղթեց

բոլորին եւ հրաւիրեց եղբ. Վազգէն Գալաճեանը՝ վարելու համար հաւաքը: Հանդիսավար վեթերան մարզիկը հանգամանօրէն ներկայացուց եղբ. Թորոսեանը՝ անցեալի փայլուն մարզիկը, միութենական պատասխանատուն, դաստիարակ ուսուցիչը եւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան գաղափարի հաւատաւորը, որ աւելի քան քառասուն տարի իր ծառայութիւնը մատուցած է լիբանանահայ գաղութին: Եղբ. Հրայր, մարզական իր բացառիկ արժանիքներուն կողքին, ունէր նկարագրի գրաւիչ յատկութիւն՝ վայելելու մարզական հայ թէ՛ օտար շրջանակներու յարգանքը եւ սէրը: Եւ այդ պատճառով, Հ.Մ.Ը.Մ.ական համակիրներ իրենց «սուղ ժամեր»ը տրամադրած էին ներկայ ըլլալու համար վեթերաններու կողմէ կազմակերպուած այդ հաւաքին եւ, հաւաքաբար իրենց գաւաթները բարձրացնելով, խմելու յարգելի հիւրին կենացը՝ խոստանալով կրկին հանդիպիլ անոր յաջորդ այցելութեան:

Ինչպէս անցեալին, այդ գիշեր եւս վեթերաններու խումբը որոշած էր գնահատագիրով եւ յուշատախտակով

մը պատուել միութեան եւ մասնաւորապէս Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտպոլի մարզախաղի վերելքին սատարած Հ.Մ.Ը.Մ.ական երկու եղբայրներու երկար տարիներու ծառայութիւնը եւ ներդրումը:

Առաջին Հ.Մ.Ը.Մ.ականը, որուն վեթերաններու այս խումբը կ'ուզէր իր երախտագիտութիւնը եւ գնահատանքը յայտնել, գաղութի յայտնի անձնաւորութիւններէն բժիշկ Արմէն Կէօնճեանն էր: Եղբ. Արմէն Լիբանանի մէջ համալրասարանական իր ուսումը ստացած է Պէյրութի Ամերիկեան Համալսարանէն եւ ապա, եօթանասունական թուականներուն, հաստատուած է Մ. Նահանգներ՝ բժշկական իր ուսումը շարունակելու համար: 1970 թուականին ան աւարտած է Թենըսի նահանգի Առողջական Գիտութեան Բժշկական Կեդրոնական Համալսարանէն՝ մասնագիտանալով հոգեբուժութեան ճիւղին մէջ: 1988-ին, Հայաստանի աղէտաբեր երկրաշարժէն ետք, Հայ Օգնութեան Միութեան հետ զործակցաբար, բժիշկ եղբ. Արմէնի ճիգերով եւ հսկողութեամբ, հիմնուած են երկու հոգեբուժարաններ՝ օգնելու համար Սպիտակի երկրաշարժին պատճառով հոգեկան տագնապէ տառապող հիւանդները: Բացի իր բժշկական մասնագիտութենէն, տղքթ. Արմէն յատուկ սէր ունեցած է ֆուտպոլի հանդէպ, եւ այդ պատճառով, երկար ժամանակ եղած է ջերմ համակիրը եւ հովանաւորը Հ.Մ.Ը.Մ.ի եօթանասունականներու Լոս Անճելըսի ֆուտպոլի խումբին՝ յատուկ գուրգուրանք եւ ուշադրութիւն ցուցաբերելով Լիբանանի քաղաքացիական պատերազմին պատճառով Լիբանանէն հեռացած եւ Լոս Անճելըս հաստատուած ֆուտպոլիստ տղոց: Ան տեւական ներկայութիւն եղած է այդ տարիներու միակ մասնաճիւղին՝ Լոս Անճելըսի մասնաճիւղի աշխատանքներ

րուն, եւ միշտ համեստ ու գնահատելի ներկայութիւն մը՝ վեթերան տղոց անցեալի մրցումներուն ու ներկայի ընկերային հաւաքներուն:




Երկրորդ Հ.Մ.Ը.Մ.ականը՝ եղբ. Յարութ Սասունեան, ծանօթ դէմք մըն է Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի պատմութեան մէջ: Անոր անցեալի միութենական ծառայութիւնը եւ դրական ներդրումը՝ Լիբանանի Հ.Մ.Ը.Մ.ին եւ մասնաւորապէս Պուրճ Համուտի մասնաճիւղի Փուլթպոլի երկրորդական խումբերու վերելքի աշխատանքներուն, եզակի են եւ անմոռաց: Եղբ. Սասունեան ծնած է Հալէպ եւ փոքր տարիքին անդամագրուած է Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն, որպէս գայլիկ եւ ապա՝ սկառուտ: Սակայն, յատուկ սէր ունենալով Փուլթպոլի մարզախաղին հանդէպ, ան անդամագրուած է Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի Փուլթպոլի երկրորդական խումբերուն: 1947 թուականին, ան ընտանիքով փոխադրուած է Պուրճ Համուտ, Լիբանան, եւ 1955-ին միացած է տեղւոյն մասնաճիւղին: Քանի մը տարի ետք ան ընտրուած

է վարչական անդամ: 1959-ին Սասունեան նշանակուած է Փուլթպոլի երկրորդական խումբերու պատասխանատու: Ան շուտով դիմած է հայկական ազգային վարժարաններու տնօրէններուն՝ ձեռնարկելով դպրոցական Փուլթպոլի խումբերու կազմութեան: Հետագային, դպրոցական այդ խումբերու մարզիկներէն շատերը անդամակցած են Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն՝ զարկ տալով Պուրճ Համուտի Փուլթպոլի երկրորդական խումբերու ընդհանուր թիւին եւ որակին:

1975-ին, եղբ. Սասունեան նշանակուած է Պուրճ Համուտի Փուլթպոլի Ա. խումբի պատասխանատու: Հոգատար խնամքով ան խումբին մարզական մակարդակը բարձրացուցած է զգալի բարձունքի եւ յաջողութիւններու: Նոյն տարին, Սասունեանի բացառիկ ճիգով եւ նիւթական երաշխիքով, Պուրճ Համուտի Փուլթպոլի ներկայացուցչական խումբը, տասնօրեայ մարզումի ու մարզական գիտելիքներ ձեռք բերելու նպատակով, այցելած է Պուլկարիա: Ան աւել-

լի քան քսան տարի ծառայած է Հ.Մ.Ը.Մ.ին՝ վարչականի հանգամանքով, սիրուած եւ յարգուած ըլլալով վարչական գործընկերներուն եւ մարզիկներուն կողմէ: Գալիֆորնիա հաստատուելէ ետք՝ 2000 թուականին, ան մեծ դեր ունեցած է Հայ Առաքելական Երիտասարդաց Միութեան համախմբման աշխատանքներուն մէջ: Եղբ. Սասունեան եղած է Ղարաբաղի եւ Հայաստանի դատին հաւատարիմ կողմնակիցը եւ հովանաւորը: Զինք մօտէն ճանչցողները կը հաստատեն եւ գնահատանքով կը յիշեն նուիրեալ աշխատանքը եւ նուիրումը այս համեստ միութենականին եւ Մարդուն:

Յուշափայտերու տուչութեան պահէն ետք, ներկաներէն շատեր խօսք առնելով ու անցեալէն դրուագներ եւ դէպքեր յիշելով՝ հաճելի եւ ուրախ միջնորտ մը ստեղծեցին՝ ապագային կրկին հանդիպելու խոստումով ու Հ.Մ.Ը.Մ.ի Փուլթպոլի վեթերաններու անցեալի ուրախ յիշատակները իրենց հետ տանելով:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controlled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



Feel at home, away from home...

Yerevan
32-38, Hanrabedoutian Street,
Yerevan 375010, Armenia
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
sales@europehotel.am

www.europehotel.am

Reservations

Studio MCKEN 2005 PARIS

Ջ Ր Վ Է Ժ

Պատրաստեց՝ Շաղիկ Գեորգեան ՊԵՅՐՈՒԹ



Ջրվէժը գետին այն բաժինն է, ուր ջուրը բարձրութենէն կը թափի: Անոր մեծութիւնը կախեալ է ջուրի քանակէն եւ բարձրութենէն: Ջրվէժներով հարուստ են լեռնային գետերը:

Թափուող ջուրի քանակով աշխարհի մեծագոյն ջրվէժը Նիակարայի ջրվէժն է, որ կը գտնուի Հիւսիսային Ամերիկայի մէջ: Ջուրին աղմուկը կը լսուի 25

քլմ. հեռաւորութենէն, այդ պատճառով ալ ան ստացած է այս անուանումը՝ Նիակարա, որ կը նշանակէ «Մեծ աղմուկ»:

Հարաւային Ամերիկայի մէջ, Վենեզուելայի Ջուրուն գետին վրայ կը գրտնուի աշխարհի ամէնէն բարձր ջրվէժը՝ Անխելը, օդաչու Անխելի անունով, որ յայտնաբերած է գայն:





Ափրիկէի Չամբէզի գետին վրայ կը գտնուի Վիքթորիա ջրվէժը, որուն բարձրութիւնը 1800 մեթր է: Չայն յայտնաբերած է Անգլիոյ թագուհին անունով կոչած է Տէյվիտ Լինկսթընը:

Ջրվէժները յարատեւ եւ անփոփոխ չեն: Թափուող ջուրի եւ անոր հետ շարժող քարերու վիթխարի ուժը աստիճանաբար կը տաշէ ու կը յղկէ ամէնէն կարծր քայռերն իսկ:

Շ Ա Ք Ի Ի Ջ Ր Վ Է Ժ

Շաքիի ջրվէժը կը գտնուի Հայաստան, Սիսիան քաղաքէն 3 քլմ. հիւսիս-արեւմուտք, Որոտանի կիրճին, Որոտանի վտակ՝ Շաքի գետին վրայ: Բարձրութիւնը 18 մեթր է: Շաքի անուանումը ան ստացած է ի պատիւ գեղեցկուհի Շաքիի: Ըստ աւանդութեան, բռնակալ մը տեսնելով Շաքիի գեղեցկութիւնը կը սիրահարի անոր եւ կը հրամայէ հետը ամուսնանալ: Հայուհին չուզելով ենթարկուիլ բռնակալին՝ ինքզինք ժայռէն վար կը նետէ: Անկուսի ժամանակ աղջկան փէշը քամիէն կը բացուի եւ կը վերածուի ջրվէժի, որուն անունով ալ ջրվէժը կը կոչեն Շաքի:





ԴԼՓԻՆՆԵՐԸ

40 տեսակ դլփիններ կան աշխարհի վրայ: Դլփիններու մարմնին երկարությունը 1-3 մետր է, երբեմն՝ մինչև 10 մետր: Անոնք ունին կտցաման դուռնչ, 70-էն աւելի ակռայ: Սովորաբար անոնք կ'ապրին վտաններով՝ իւրաքանչիւրին մէջ 15-40 դլփին: Անոնք թէեւ ջուրին մէջ կ'ապրին, սակայն օդ կը շնչեն: Կը սը-



նանին ձկնիկներով: Կ'ունենան մէկ ձագ, զոր կաթով կը կերակրեն 4-6 ամիս: Կան դլփիններու նստակեաց եւ գաղթող տեսակներ:

Երբ դլփիններէն մէկը օգնութիւն խնդրէ, ընկերները շատ արագ լողալով կը մօտենան, կը բռնեն անոր երկու կողմէն եւ գայն կը պահեն ջուրին վրայ, որպէսզի ան կարողանայ շնչել: Նոյնը կ'ընեն խեղդուող մարդու պարագային:

Դլփինները իրենց սուր լսողութեան շնորհիւ շատ

լաւ կը կողմնորոշուին նոյն իսկ պղտոր ջուրին մէջ:




Անոնց ուղեղը չափով մեծ է, որուն համար ալ անոնք կրնան վերամշակել ձայնային եւ բազմաթիւ այլ տեղեկութիւններ:

Դլփինները իրարու հետ կը հաղորդակցին սուլոցի եւ չփփոցներու նմանող ձայներով: Անոնք կրնան կապկել նաեւ մարդոց խօսակցական ձայները:

ՎԱՐԴԱՎԱՌ

Վարդավառը հայոց հնագոյն տօներէն է, զոր նշած են հեթանոս հայերը: Ան կը տօնուի նաեւ այսօր: Վարդավառը կը նշուի Զատիկուան յաջորդող 14-րդ Կիրակին: Ըստ աւանդութեան, հեթանոսական շրջանին ան նուիրուած էր սիրոյ ու ջուրի հեթանոս աստուածուհի Աստղիկին: Ան վարդաջուրեր ցօղելով ու վարդեր նուիրելով սէր կը պարգեւէր մարդոց: Մարդիկ իրարու վրայ ջուր կը ցօղէին եւ աղանիներ կը թռցնէին:



Ըստ քրիստոնէական աւանդութեան, Նոյը ջրհեղեղէն ետք կանգ կ'առնէ Արարատ լեռան վրայ, իսկ յետոյ երբ կ'իջնէ լեռնէն, այդ օրէն կը սկսի Նաւասարդ ամիսը: Նոյը կը պատուիրէ իր որդիներուն, ի յիշատակ ջրհեղեղին, իրարու վրայ ջուր թափել:



ԳԻՏԷԻՔ ԹԵ ...

Պայթեան եւ Հիւսիսային ծովերը իրարու կը հանդիպին, սակայն չեն խառնուիր, ջուրերու խտութեան տարբերութեան պատճառով:



Տարբեր Հայեացքով



Էլի Հուլիշեան

ՍՈՒՏՈՔՈՒ

2			1		4			7
	9			8			4	
		6	5		7	8		
3		4				6		9
	2						3	
8		1				5		4
		3	8		5	4		
	4		1				5	
7			3		6			8

Հորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած գծացանցը բաղկացած է իւրաքանչիւրը 9 քառակուսի հաշուող 9 բաժիններէ (3x3): Բացառումի սկզբունքին կիրարկուծով իւրաքանչիւր քառակուսիի մէջ թուանշան մը զետեղել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ 9 քառակուսիսնոց իւրաքանչիւր բաժին ունենայ 1-9 թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով, ոչ մէկ պարագայի արտօնուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ: Սկսելու համար, կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ քառակուսիներուն մէջ զետեղուած են:

Նախորդին լուծումը

1	9	6	3	7	8	4	5	2
5	7	8	2	9	4	3	1	6
2	4	3	1	6	5	9	7	8
8	3	9	6	1	2	7	4	5
7	5	2	4	8	3	6	9	1
4	6	1	7	5	9	8	2	3
3	1	5	9	4	6	2	8	7
9	2	7	8	3	1	5	6	4
6	8	4	5	2	7	1	3	9

Պատասխանը՝ յաջորդի


ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

1. «Էն.Պի.էյ.»ի կազմերէն:
2. Շրջիլ - Սահմանային անցք՝ Լիբանանի եւ Սուրիոյ միջեւ:
3. Մառախուղ - Թթուածնատ:
4. Դրկից տառեր - Սփածանելի - Ռամկօրէն՝ այո՛:
5. Անբաղաբավար - Տարածքի միաւոր - Խաղացած պաշտօն:
6. Բեկանէի - Շահան Նաթալիի երկերէն:
7. Համար - Գորշապահանգ:
8. Նախադաս ժխտական մասնիկ - Ապաւառ:
9. Բոսոր - «Մատեան ողբերգութեան» երկին հեղինակը:
10. Ամերիկեան համանուն նահանգ եւ գետ:
11. Ունկնդրել - Պայծառ եւ ցուրտ օդ:
12. Վարժ - Իրերայաջորդ գիրեր - Կից:
13. Այբուբենէն - Բրինձ - Դրկից տառեր - 1918, Նոյեմբեր 1-ին հիմնուած միութիւնը:
14. Բագուկ - Պոչ - Հազար ու մէկ եկեղեցիներու քաղաքը:
15. Ապշիլ - Օտար երգչուհի:
16. Լիպիական լրատու գործակալութիւն (հակ.) - Իգական օտար անուն - Տհաս ցորեն:
17. Կենդանական աննդանիւթ - Փոքրացնող մասնիկ - Հրէ՛ - Այբուբենէն:
18. Երաժշտական չափ - Եգերք - Խորք:
19. Առ հարիւր համեմատութիւն - Էական բայ - Գեռ չհրատարակուած:
20. Լծորդութիւն - Ազգագուն - Գրաբար՝ հասկցի՛ր - Հպարտ:

ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ

1. Աղամանդ - Շէյքսպիրի երկերէն - Սաստիկ սիրահարի:
2. Գերմանացի բանաստեղծ (1772-1801) - Արեւմտեան զինուորական ուխտ մը - Յարդախառն շաղախ:
3. Անդարձագիր - Քեմուխտ - Կենդանիներու խումբ:
4. Այեր - Ճատրակի միջազգային ֆետերասիոնի՝ «ՅԻՏԷ»ի նախագահը:
5. Բովանդակ - Խաղաթուղթի մէկնոց - Կրկնուած բաղաձայններ - Ուժգնութիւն:
6. Մի՛ խօսիր - Պարտիզայանի գործիք - Փորթուզայցի ֆուլթպոլիստ:
7. Գիշակեր թռչնագգի - Թիւէ՛ - Շօշափելի - Դարձեալ:
8. Յուցական ածական - Կապան - Երիկամունք:
9. Հոմանի - Անորոշ դերանուն:
10. Քրիստոնէական Ջանից Ամառնային Կեդրոն - Հարեւանցի կար - Անուշահոտ փոքր սեխ - Տարի:
11. Ձիթաղացի քար - Ոգելից ըմպելի - Յուցական ածական - Յուցական ածական - Ափրիկեան երկիր:
12. Այր - Թուրիկի ծննդավայրը - «Ֆորմիլա 1»-ի գերմանացի մրցավարորդ:
13. Պարանոց - Իրերայաջորդ գիրեր - Հոյլ - Յարաբերական դերանուն - Օծանելիք:
14. Տարիք (հակ.) - Խոնարհ հրաժեշտի բացազանչութիւն - Արժէքի կէտ - Այբուբենէն:
15. Կտրիճ, անվեհեր - Գլխաւոր:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15



ԴԱՍՏԱՎԻ ԳԿԱՌՇՈՒ ԹԻՒ 199 ԽԱՉԲԱՌԻ ԼՈՒԾՈՒՄ

1	Ե	Ո	Ա	Ք	Ի	Մ	Լ	Ո	Յ	Ե	Ի								
2	Ա	Լ	Մ	Ա	Ս	Տ		Մ	Ե	Փ									
3	Ռ	Ո	Ն	Կ	Ի	Ն		Ց	Ր	Ե	Լ								
4	Ն	Ք		Տ	Ո	Կ	Ա	Լ		Ա	Ղ	Ա							
5	Օ		Տ	Ի	Ի		Ե	Ր	Ի	Տ	Ա	Ս	Ա	Ր	Գ				
6	Թ	Ե	Ր	Ա	Հ	Ա	Ի	Ա	Տ		Ն	Ք	Թ	Է	Ր				
7	Ր	Ր		Ն	Ի	Մ		Գ	Ա	Ձ		Ա	Լ		Ա				
8	Ո	Ր	Փ	Ա		Է	Մ	Ի	Լ				Ա	Ր	Մ				
9	Ի			Ա	Ն	Ա	Ր	Ի					Ն	Է					
10	Լ			Բ	Ա	Ր		Ա				Թ		Ո					
11	Ի			Գ	Ր	Ի	Ի					Ա	Տ	Ր					
12				Ա	Փ	Ո	Ի	Մ		Ե	Ա		Ե	Ս					
13	Կ	Ա	Կ	Ա	Ր	Ի	Ն		Ո	Վ	Ա	Ս	Ի	Ս					
14	Ա	Լ	Ի			Է	Ա	Ն	Ա	Լ		Կ	Ա	Յ					
15	Թ	Ի	Ձ			Թ	Ր	Թ	Ռ	Ա	Լ		Ն	Օ					
16	Ո	Ք				Գ	Ե		Կ	Ա	Ր	Ո	Ղ						
17	Ղ		Մ			Ս	Ա	Ր	Մ	Է	Ն		Ղ						
18	Ի	Ն	Ի			Ք	Ն	Ա	Ր	Ի	Կ		Ս	Ա					
19	Կ	Ա	Տ	Ա	Ղ	Ի		Ե		Ա	Լ	Ի	Ե	Ա	Ն				
20	Է	Մ	Ք		Ի	Ձ	Ե	Ի	Ա	Ն		Ա	Մ	Ր	Ի				



UEFA EURO 2012™ CHAMPIONS

JARQU
MANZOS
VERTA
MIKI



3

12

13

9